**Ազգ** Azg

15 ՅՈՒՆԻՍ 2013 ՇԱԲԱԹ 100(5183)

ISSN: 1829-1651

# Օբաման թույլատրեց զինել սիրիացի ապստամբներին

*Պատրվակը քիմիական զենքի կիրառումն է*

**ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման թույլատրել է որոշ զինատեսակներ մատակարարել սիրիացի ապստամբներին: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը՝ վկայակոչելով լավատեղյակ աղբյուրներ: Ըստ էության, խոսքը Սիրիայի իրադարձություններին բացահայտ օտարերկրյա միջամտության մասին է: Արդեն իսկ հայտնի էր, որ ընդդիմադիրների հետ կողք կողքի կռվում են տարբեր երկրներից եկած գրոհայիններ, իսկ Սաուդյան Արաբիան եւ Քաթարը քողարկված ձեւերով զենք են մատակարարում սիրիացի ապստամբներին:**

**Սպիտակ տունը հինգշաբթի օրը հայտարարեց, որ սիրիացի ապստամբներին ուղղակիորեն կհատկացվի ռազմական օգնություն: Պաշտոնական մակարդակով այդ օգնության մանրամասնությունները չեն հաղորդում եւ կոնկրետ զինատեսակներ չեն նշվում: Սակայն հունիսի 14-ին «Նյու Յորք թայմս» թերթը տեղեկացրեց, որ սիրիացի ապստամբները ԱՄՆ-ից կստանան հրազեն եւ հակատանկային համակարգեր: Ամերիկացիներն արդեն մի քանի ամիս սիրիական ընդդիմությանը մատակարարում են զինամթերքի փոքր քանակություն, ինչպես նաեւ պարեն եւ դեղորայք, սակայն ուղղակիորեն զենք մատակարարելու ապստամբների խնդրանքները մնում էին անպատասխան:**

**Ընդդիմությանը ցույց տրվող ռազմական օգնությունն ընդլայնելու որոշումը ընդունվեց այն հայտարարությանը զուգընթաց, թե ԱՄՆ վարչակազմն ունի Բաշար Ասադի զորքերի կողմից քիմիական զենքի օգտագործման հավաստի տեղեկություններ:**

**ԱՄՆ իշխանությունների տվյալներով՝ Սիրիայի բանակը վերջին ամիսներին «սահմանափակ ծավալներով» կիրառել է քիմիական զենք, մասնավորապես՝ նյարդակաթվածային զարին գազ, որի հետեւանքով սպանվել է 100-150 մարդ: Դեռ 2012-ի ամռանը նախագահ Օբաման հայտարարել էր, թե Սիրիայի կառավարական զորքերի կողմից քիմիական զենքի կիրառությունը կդառնա «կարմիր գիծ», որը կարող է ճանապարհ բացել Սիրիայի հակամարտությանը օտարերկրյա ուղղակի միջամտության համար:**

**Մինչդեռ, Սիրիայում քիմիական զենքի օգտագործման փաստերը քննող ՄԱԿ-ի հատուկ հանձնախմբի անդամ, միջազգային քրեական դատարանի նախկին նախագահ Կառլա դել Պոնտեն վերջինս հայտարարել էր, որ Սիրիայում, ըստ երեւույթին, քիմիական զենք օգտագործել են ապստամբները:**

**Պ. Ք.**

# Հանրությունը հեշտ է ընկալում սենսացիոն նորությունները

*Որոնք, ըստ վարչապետ Տիգրան Սարգսյանի, իրենց մեջ կրում են բացասական տրամադրություններ*

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Երեկ Երեւանում տեղի ունեցած «Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան» միջազգային համաժողովում ելույթ ունենալով՝ Հայաստանի վարչապետ **Տիգրան Սարգսյանը** նշեց, որ կառավարության ծրագիրը կարող է ունենալ հաջողություն, եթե դրա սկզբունքները, գաղափարախոսությունը նախապես ներկայացվում են հանրությանը, դառնում քննարկման եւ քննադատության առարկա, որից հետո էլ ընդունվում եւ սկսվում են իրականացվել: Խոսելով բաց կառավարման սկզբունքների մասին՝ վարչապետը համոզմունք հայտնեց, որ չի կարող ձեւավորվել քաղաքացիական հասարակություն, եթե կառավարության գործունեությունը չլինի բաց ու թափանցիկ: Դրա համար, երբ իշխանությունը կիրառում է իր ունեցած պարտադրանքի գործիքը, հասարակությունը պետք է վստահ լինի, որ այն ի չարս չի օգտագործվում: Տիգրան Սարգսյանն ավելացրեց, որ իշխանական լծակները՝ ֆինանսական միջոցների վերաբաշխումը, տնօրինումը եւ տիրապետումը նույնպես պետք է լինեն արդարացի, «ինչը եւս ենթադրում է, որ իշխանությունները մշտապես պետք է գտնվեն հասարակության վերահսկողության տակ»: Վարչապետի համոզմամբ՝ քաղաքացիական հասարակության կառուցմանն այլընտրանք գոյություն չունի եւ դրան հասնելու ճանապարհը կառավարության գործունեության թափանցիկությունն է բոլոր մակարդակներում:




Տես էջ 2

# Կայացավ A 350 օդանավի առաջին թռիչքը

Հունիսի 14-ին Թուլուզի «Բլանյակ» օդանավակայանի թռիչքուղուց առաջին անգամ օդ է բարձրացել եվրոպական «Էրբաս» ընկերության նոր A 350XWB լայնիրան ինքնաթիռը: RFI ռադիոկայանի տվյալներով, անձնակազմը բաղկացած է եղել 6 մարդուց (2 օդաչու եւ 4 բորտինժեներ): Թռիչքը տեւել է 4 ժամ:

A 350-ի ստեղծման նախագիծը սկսել էին իրականացնել 7 տարի առաջ: Նոր օդանավը 50 տոկոսով կազմված է կոմպոզիտային նյութերից եւ համարվում է ամերիկյան Boeing 787 Dreamliner-ի եւ Boeing 777-ի մրցակիցը: Նախատեսված է հեռավոր չվերթերի համար:

A 350-ը թողարկվում է 3 տարբերակով. A 350-1000-ը ունի 350 տեղ, A 350-900-ը՝ 300 տեղ եւ A 350-800-ը՝ 250 տեղ:




# Ադրբեջան. Ռուստամ Իբրահիմբեկովը կձերբակալվի՞

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

Հունիսի 7-ին Բաքվում ձեւավորվել է «Ժողովրդավարական ուժերի ազգային խորհուրդ» անվանված ընդդիմադիր հասարակական-քաղաքական դաշինք: Կառույցի նախագահ է ընտրվել կինոռեժիսոր Ռուստամ Իբրահիմբեկովը, գործադիր մարմնի ղեկավար՝ Էլդար Նամազովը: Վերջինս ժամանակին Հեյդար Ալիեւի աշխատակազմում պատասխանատու պաշտոններ է զբաղեցրել: Ժողովրդավարական ուժերի ազգային խորհրդի նախագահ Ռուստամ Իբրահիմբեկովն ընտրվել է՝ գտնվելով Մոսկվայում:

Դա առիթ էր հանդիսացել, որ պաշտոնական քարոզչությունը նրան համարի «Կրեմլի քաղաքական նախագիծ»: Իշխող վարչախումբը քննադատության թիրախ է դարձրել նաեւ նախկին փոխվարչապետ Աբաս Աբասովին, որ մշտապես բնակվում է Ռուսաստանի մայրաքաղաքում եւ վերջերս ընտրվել է ՌԴ ադրբեջանական համայնքի ղեկավար: «Մի փորձեք խեղաթյուրել ռուս-ադրբեջանական հարաբերությունները»,- պատասխան հայտարարության մեջ ասել է Աբասովը եւ նկատել տվել, որ «նախագահի ընտրությունն Ադրբեջանի ներքին գործն է, եւ ոչ ոք միջամտելու ցանկություն չունի»:

Չնայած դրան, Բաքվում տեղեկատվական արշավ է սկսվել նախկին փոխվարչապետի որդու՝ իշխող կուսակցությունից Միլլի մեջլիսի պատգամավոր Այդըն Աբասովի դեմ, եւ վերջինս երեկ պարտադրված է եղել ասել, որ իր հայրն ու ինքը «հավատարիմ են Հեյդար Ալիեւի քաղաքական գծին, որ հաջողությամբ շարունակում է զարգացնել Իլհամ Ալիեւը»:

Այդուհանդերձ, Ռուստամ Իբրահիմբեկովի եւ Աբաս Աբասովի դեմ կրքերը չեն հանդարտվում: Վերջին տեղեկություններով՝ Ռուստամ Իբրահիմբեկովը կարող է դառնալ նախագահական ընտրություններում ընդդիմության միասնական թեկնածու: ԱԺՃ առաջնորդ Ալի Քերիմլին մասնավորապես հայտարարել է, որ իրենք «պատրաստ են մոռանալ անցյալը՝ հանուն ապագայի»:

Տես էջ 8

# Միայն իշխանության ձգտում եւ ոչ մի ազնվություն

**ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ**
**Դիտրոյթ, ԱՄՆ**

Երբ Սամանթա Փաուերը հրատարակեց «Դժոխքից առաջացած խնդիրը: Ամերիկան եւ ցեղասպանության դարաշրջանը» (A Problem from Hell: America and the Age of Genocide) խորագրով մրցանակակիր գիրքը, հայերս, աշխարհի տարբեր մասերում ծվարած մարդու իրավունքների պաշտպանների հետ համազոր, հավատացինք, որ երկնքից է նա իջել՝ պաշտպանելու ցեղասպանություններին եւ մարդու իրավունքների ոտնձգություններին զոհ գնացած մարդկանց իրավունքները: Նա այնքան փաստացի ու իրավական հիմնավորումներով էր տվյալներ բերել եւ այնքան կրքոտ էր այդ ամենի մասին գրել, որ կասկածի նշույլ անգամ չէր թողնում, որ ինքը իրոք մարդու իրավունքների եւ արդարության առաքյալն է, մունետիկը:

Նախագահ Օբամայի առաջին ընտրապայքարի օրերին նա գրավոր հայտարարություններով եւ տեսահոլովակներով մոտեցավ հայկական համայնքներին՝ համոզելու համար նրանց, որ ընտրվելու դեպքում Օբաման անպայման ճանաչելու է հայերի ցեղասպանությունը: Շնորհիվ հայերից եւ մարդու իրավունքների պաշտպան տարբեր կազմակերպություններից քվեներ կորզելու նրա ջանքերի, Օբաման ընտրվեց նախագահ, եւ Փաուերն էլ պաշտոն ստացավ Սպիտակ տանը: Նշանակվեց նախագահի հատուկ խորհրդական մարդու իրավունքների պաշտպանության գծով: Ավելի բարձր պաշտոնի էլ կարող էր հավակնել, եթե Հիլարի Քլինթոնի հետ նախօրյակին վիճած եւ նրան «հրեշ» (monster) անվանած չլիներ «The Scotsman» պարբերականին տված հարցազրույցում:

Այսօր, երբ նրան առաջադրել են ստանձնելու ՄԱԿ-ում Մ. Նահանգների ներկայացուցչի պաշտոնը (փոխարինելով Սյուզան Ռայսին), Փաուերը բոլորովին տարբեր քաղաքական գործիչ է դարձել: Նա հավատարիմ չմնաց հայերի ցեղասպանության հարցում իր տված խոստումին, ոչ էլ այդ մասին հիշեցրեց իր «բոսին»՝ Օբամային: Փոխարենը նա ապավինեց մի յուրահատուկ հնարքի, հուշելով նախագահին, որ նա էլ օգտագործի երջանկահիշատակ Հովհաննես Պողոս Բ-ի արտասանած «Մեծ եղեռն» եզրը:

Իր հերթին նախագահ Օբաման շարունակեց կրկնել, որ չի փոխել իր դիրքորոշումը այդ (ցեղասպանության- Հ.Ծ.) հարցի վերաբերյալ, առանց, սակայն, հստակորեն սահմանելու, թե ինչ է «այդ հարցը»:

Ամերիկայի հայկական համագումարը հունիսի 7-ին հրատարակեց մամուլի մի հաղորդագրություն, որտեղ ներկայացված են Սամանթա Փաուերի վաղ շրջանի գործունեությունն ու հայտարարությունները, որոնք նրան բնութագրում են որպես ազնիվ մտավորականի եւ մարդու իրավունքների պաշտպանի: Ոչ մի խոսք նրա հետագա անազնիվ քաղաքական քայլերի մասին, որոնց շնորհիվ քաղաքական իշխանության սանդղակներով նա տիրանում է ավելի բարձր պաշտոնների: Հաղորդագրության եզրափակիչ պարբերությունում նշված է. «Համագումարը ակնկալում է, որ հաջորդող շաբաթներին Մ. Նահանգների Սենատը վճռականորեն կհաստատի նրա թեկնածությունը այդ պաշտոնում»: Նման միակողմանի ներկայացումը վաս ու վնասաբեր ծառայություն է հայկական համայնքին:

Տես էջ 3

# Հայաստանում հավաքագրվող արյան քանակը դեռեւս բավարար չէ

Երեկ արյան դոնորի միջազգային օրն էր: 2005-ին Ժնեւում կայացած Առողջապահության համաշխարհային ասամբլեայի սեսիայում որպես արյան դոնորի միջազգային օր հաստատվեց հունիսի 14-ը՝ ի պատիվ 1868 թվականին նույն օրը ծնված ավստրիացի բժիշկ Կառլ Լանդշտայների, որը 1930-ին Նոբելյան մրցանակի է արժանացել մարդու արյան խմբերի հայտնաբերման համար:



Մարդուց մարդուն արյան փոխներարկում առաջին անգամ կատարվել է 1819-ին Անգլիայում: Այսօր արյան փոխներարկումն արդեն լայնորեն կիրառվում է վիրաբուժության, մանկաբարձության, գինեկոլոգիայի, այրվածքաբանության, վերակենդանացման ու արյունաբանության ոլորտներում, եւ հաճախ արյան բաղադրամասի ժամանակին կատարված փոխներարկումը մարդկային կյանք է փրկում:

ՀՀ առողջապահության նախարարության տվյալներով՝ Հայաստանում հավաքագրվող արյան քանակը տարեցտարի ավելանում է. եթե 2000-2001 թվականներին տարեկան լինում էր շուրջ 6000-7000 արյունատվություն, ապա միայն 2012-ին եղել է շուրջ 15 հազար արյունատվություն: Այնուամենայնիվ, մեր երկիրը դեռեւս հավաքագրվող արյան քանակի ավելացման խնդիր ունի: Առողջապահության համաշխարհային կազմակերպության երաշխավորագրերի համաձայն՝ արյան բաղադրատարրերով ու պատրաստուկներով Հայաստանի պահանջարկն ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել 60 հազար արյունատվություն:

Հայաստանում ներկայումս արյան դոնորների կազմում գերակշռում են փոխհատուցվող դոնորները՝ կազմելով 43,8 տոկոս, մինչդեռ առավել անվտանգ խումբ են կազմում անվարձահատույց կամավոր դոնորները, որոնք մեզ մոտ կազմում են 3,4 տոկոս:

Արյունատվության շնորհիվ հնարավոր է մարդկային կյանք փրկել, ու այս գաղափարը, ըստ առողջապահության նախարարության, կարեւոր է, որ սերմանվի մեր հասարակության մեջ հնարավորինս վաղ հասակից: Սեփական արյունը նվիրաբերելը մարդասիրական քայլ է, նաեւ՝ սեփական առողջությանը նպաստող, ինչը շարունակաբար անհրաժեշտ է քարոզել ու խրախուսել:

**Ի. Պ.**

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

# Հանրությունը հեշտ է ընկալում սենսացիոն նորությունները

*1-ին էջից*

**Միաժամանակ, հասարակությունը պետք է պատրաստ լինի մեծածավալ տեղեկատվության մեջ զանազանելու ճիշտը սուտից, որպեսզի զարգացման ծրագրերը հասնեն իրենց նպատակներին: Սակայն, Տիգրան Սարգսյանի խոսքով, հանրությունը հեշտ է ընկալում սենսացիոն նորությունները, եւ այդպիսի լուրերն էլ հիմնականում իրենց մեջ կրում են բացասական տրամադրություններ: Մամուլը, հեռուստատեսությունը հեղեղված են լինում բացասական տեղեկատվությամբ, եւ ստեղծվում է հուսախաբություն, ապագայի նկատմամբ անվստահություն եւ մշտական դժգոհություն, որը հնարավորություն չի տալիս բարեփոխումները տանելու առաջ: Այս առումով վարչապետը կարեւորեց պատասխանատվությունն ու պրոֆեսիոնալիզմը:**

**Տիգրան Սարգսյանը նշեց, որ Հայաստանի կառավարությունը մտնում է աշխարհի առաջին հինգ պետությունների շարքը, որոնք պետական բյուջեի ծախսերն ամբողջությամբ դարձրել են թափանցիկ: Օն-լայն ռեժիմով կարելի է հետեւել, թե ՀՀ պետական բյուջեն ինչ ծախսեր է կատարել: «Այս երկու տարիների ընթացքում, երբ այս համակարգը ներդրվել է, ընդամենը մեկ դեպք է եղել, որ ԶԼՄ-ներն անդրադարձել են պետական գնումներին եւ կասկած հայտնել՝ արդյոք այս գործարքն արդարացվա՞ծ էր: Այն պարագայում, երբ ԶԼՄ-ներից մենք տեղեկատվություն ենք ստանում, թե պետական միջոցները փոշիացվել են, վատնվել են եւ այլն: Դրա ապացուցողական մասը, ցավոք սրտի, բացակայում է: Այս աշխատանքը ենթադրում է պրոֆեսիոնալիզմ, այն ԶԼՄ-ները, որոնք իրենց առջեւ նպատակ են դրել զբաղվել հետաքննությամբ, բացահայտել իշխանությունների չարաշահումները, պետք է ունենան նաեւ գիտելիքներ եւ հնարավորություն՝ վերլուծելու այդ տեղեկատվությունը, որպեսզի ապատեղեկատվություն չտարածվի», ասաց վարչապետը: Նա նաեւ կարեւորեց պատասխանատվությունը ոչ ստույգ տեղեկատվության դեպքում, նշելով, որ պետք է լինել հետեւողական, պատասխանատվության կանչել այն մարդկանց, ովքեր թույլ են տալիս այդպիսի ապատեղեկատվություն: «Սա էլ նուրբ խնդիր է, որին մենք դեռեւս պատրաստ չենք, որովհետեւ, այս առումով, ցանկացած գործողություն դիտարկվում է որպես ճնշում ընդդիմախոսի նկատմամբ, այլ ոչ թե օբյեկտիվ եւ հասկանալի ձգտում՝ հասնելու ճշմարտությանը», ասաց վարչապետը:**




## Չի բացառվում Հայաստանի մասնակցությունը «Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի» ծրագրին

**Հայաստանում ԱՄՆ-ի դեսպան Ջոն Հեֆերնը իր ելույթում նշեց, որ Հայաստանի կառավարությունը սերտորեն համագործակցում է «Բաց կառավարման գործընկերության» շրջանակում, եւ իրենք հավատացած են, որ բաց հասարակությունը եւ տնտեսությունը հնարավորություն կտան երկրներին ծաղկում ապրելու, լինելու առավել բարեկեցիկ, անվտանգ եւ խաղաղ: «Բաց կառավարման գործընկերության» գործողությունների ծրագրով առաջընթացը կարեւոր է Հայաստանի համար, ինչն, ըստ դեսպանի, կօգնի, որ Հայաստանը բարելավի իր ցուցանիշները, որոնք դիտարկվում են «Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի կողմից»: Ջոն Հեֆերնը հիշեցրեց, որ Հայաստանը նախկինում եղել է «Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի» ծրագրի շահառու, եւ այս աշխատանքը կարող է օգնել, որ մեր երկիրը նորից մասնակցի կորպորացիայի ծրագրերին:**

# Մայրաքաղաքի բուժհաստատությունները վերազինվում են նոր բժշկական սարքավորումներով

Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի նախաձեռնությամբ առաջին անգամ Երեւան քաղաքի բյուջեով միջոցներ են հատկացվել քաղաքապետարանի ենթակայության բուժհաստատությունների համար նոր սարքավորումների ձեռքբերման նպատակով: «Աջակցություն առողջապահական կազմակերպություններին բժշկական սարքավորումների ձեռքբերման համար» ծրագրի շրջանակում թվով 16 բուժհաստատությունների տրամադրվել են 44 անուն բուժսարքավորումներ, որոնցից 15 -ը կենսաքիմիական անալիզատորներ են, 7-ը՝ ուլտրաձայնային հետազոտման սարքեր: Ձեռք է բերվել 2 աուդիոմետր, կարդիոտվիչով ուլտրաձայնային հետազոտման 3 եւ էլեկտրասրտագրության 17 սարք:



Սիրտ-անոթային հիվանդությունների վաղ հայտնաբերման եւ կանխարգելման տեսանկյունից հատկապես կարեւորվում է կարդիոտվիչով ուլտրաձայնային հետազոտման սարքերի տրամադրումը, քանի որ նախկինում Երեւանի քաղաքապետարանի ենթակայության պոլիկլինիկաներում այդպիսի սարքավորում երբեւէ չի եղել:

Քաղաքապետարանի նման աջակցությունը, ինչպես նշում են բուժաշխատողները, առանձնակի կարեւորություն է ստանում, եթե հաշվի առնենք նաեւ, որ տարիներ շարունակ բուժհաստատություններում ներդրումներ չեն իրականացվել, իսկ սարքավորումներն էլ մաշվել են թե՛ ֆիզիկապես եւ թե՛ բարոյապես:

# Բյուրականի աստղադիտարանը դարձավ Գիտական միությունների միջազգային խորհրդի համաշխարհային տվյալների համակարգի անդամ

Բյուրականի աստղադիտարանը դարձավ Գիտական միությունների միջազգային խորհրդի (ԳՄՄԽ, International Council of Scientific Unions-ICSU) համաշխարհային տվյալների համակարգի (World Data System-WDS, http://www.icsu-wds.org/) անդամ: Ներկայումս մի շարք գիտություններ եւ մարդկային գործունեության այլ ոլորտներ սկսել են լայնորեն օգտագործել բոլոր բնագավառներում կուտակված տվյալները եւ փոխանակվել դրանցով: Օրինակ, աստղագետներն օգտագործում են ատոմային սպեկտրադիտության տվյալները, հաղորդակցության միջոցները՝ օդերեւութաբանության, տիեզերական թռիչքների համար օգտագործում են աստղաչափական տվյալները եւ այլն: Այդ առիթով գաղափար է առաջացել՝ ստեղծել բոլոր տվյալների մի հսկայական շտեմարան, որտեղ հստակ ձեւաչափով կպահվեն եւ օգտագործման համար հարմար տեսքով մատչելի կլինեն տարբեր գիտություններից ստացված տվյալները: Հենց դրա համար էլ վերջերս վիրտուալ աստղադիտարանների օրինակով ստեղծվել է WDS-ը, որը հստակ ծրագրային ապահովմամբ աշխատող ակտիվ տվյալների շտեմարան է: Բյուրականի աստղադիտարանում (ԲԱ) է իրականացվել Հայաստանում առաջին թվայնացման նախագիծը՝ թվայնացված առաջին բյուրականյան շրջահայությունը (Digitized First Byurakan Survey-DFBS), այնուհետեւ դրա հիման վրա ստեղծվել է հայկական վիրտուալ աստղադիտարանը (Armenian Virtual Observatory-ArVO): Այս աշխատանքների եւ Բյուրականում կուտակված այլ դիտողական տվյալների ներգրավման համար էլ ԲԱ ընդունվեց ICSU WDS, որի կազմում արդեն ներգրավվել են շուրջ 100 գիտական կազմակերպություններ, տվյալների կենտրոններ ու շտեմարաններ, գիտահետազոտական եւ այլ ինստիտուտներ: Տվյալների ինտեգրման շնորհիվ առավել հեշտ ու մատչելի է դառնում գիտական, հատկապես միջճյուղային հետազոտությունների իրականացումը, ինչը խթանում է համագործակցության նոր ծրագրերի եւ գիտական նոր ուղղությունների առաջացումը:

**Հայկական աստղագիտական ընկերություն**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

Անցուդարձ

# Վրեժը չէր կարող պարտվել հիվանդությանը

«Վաթսուն տարին ապրելու համար շատ է, բայց ամենահասարակ բաները հասկանալու համար՝ քիչ: Ինչի եմ հասել վաթսուն տարեկանում. շատ բան էի ուզում գրել, բայց բարեբախտաբար այդ ամենն արդեն գրել է Վիլյամ Սարոյանը: Լավ թե վատ՝ ինչ գրել եմ, սրտով եմ գրել, դրանք իմն են եւ դրանցով կարողացել եմ պահպանել իմ ազատությունը, դրանց մեջ ապրում է մարդու այն տեսակը, որի անունը Վրեժ Իսրայելյան է...Գրածներիս համար ամաչելու բան չունեմ, չգրածներիս համար ամաչում եմ»:

Այսպես գրել է մեր սերնդակից գրող Վրեժ Իսրայելյանը չորս տարի առաջ՝ իր վաթսունամյակին: Երեկ ցնցեց լուրը՝ ինքնասպան է եղել գրող Վրեժ Իսրայելյանը:

Մի քանի օր առաջ նա հետազոտվել էր, քանի որ լավ չէր զգում իրեն, հայտնաբերվել էր վերջին աստիճանում գտնվող քաղցկեղ: Հաջորդել էր ինքնասպանությունը: Վրեժին ճանաչել եմ շատ վաղուց, ու մինչ նրա մահվան մանրամասներն իմանալը՝ մտքովս անցավ, որ Վրեժը չէր կարող հիվանդությունից պարտված մահանալ, նա իր սասունցի նախնիների ֆիդայական արյունն էր կրում, ովքեր վերջին գնդակ էին պահում՝ թշնամու ձեռքը չընկնելու համար: Նրանց պես էր վարվել երեւի:

Հետո մանրամասները արդեն հաստատեցին այդ զգացողությունը, ու այն, ինչ հայտնի դարձավ, ավելի շատ իր ստեղծած գրականության հերոսների պահվածքին էր նման, մինչեւ վերջին պահը էությամբ գրող եւ զինվոր մարդու ձեռագիր էր. 1-03 ծառայությունը կանչով մեկնել է Վաղարշյան 19/1 շենք եւ հայտնաբերել հրազենային վնասվածքով նրա դին (այդ մասին ահազանգվել է ոստիկանություն): Արդեն ոստիկանությունը հյուրասենյակում հայտնաբերել է վաթսունչորսամյա Վրեժ Իսրայելյանի դին՝ աջ ձեռքին հրազեն: Գրասեղանին հրաժեշտի նամակ՝ Աստծուն շնորհակալությամբ, որ ունեցել է լավ կին ու որդի (Գայանե ջան, Մհեր ջան, ցավակցում եմ), լավ թոռնիկներ, եղբայր ու ընկերներ, ու ներողություն խնդրել, քանի որ չի ուզեցել ինքն իրենից զզվել ու նոր հեռանալ: Նամակն ու նրա «Վաղ, թե ուշ» գիրքն իրա կողքին են եղել գրասեղանին: Ամեն ինչ հենց այնպես է, ինչպես Վրեժի պատմվածքներում:



Վրեժ Իսրայելյանը երկրի զգացողությունը մեջը մարդ էր, չնայած երբեք ի ցույց չէր դնում իր այդ որակը: Ուղղակի էդպես ապրում էր, ու նրա կողքին դժվար էր երկրի զգացողություն չունեցող մարդկանց համար, կամաչեին, քանի որ նրանից փոխանցվում էր հայ մարդու շունչ, հայ մարդու կերպ, սնապարծության ու անարժեք բաների հանդեպ անհաշտություն:

Համալսարանական կրթությունից հետո աշխատել է հեռուստառադիոպետկոմի երիտասարդական հաղորդումների խմբագրությունում (միշտ հպարտությամբ եմ հիշում, որ նրա տեղը ես ընդունվեցի աշխատանքի), նրա առաջին պատմվածքները հենց ռադիոյով են հաղորդվել: Հետո աշխատել է «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթում. «Սովետական Հայաստան» թերթում: Անկախությունից հետո երկար տարիներ «Հայ զինվոր» թերթի գլխավոր խմբագիրն էր, 1999-ից պաշտպանության նախարարության լրատվության եւ քարոզչության վարչության պետը, իսկ այս մի քանի տարին՝ «Նաիրի» հրատարակչության տնօրենը:

Նրա պատմվածքները լայն ընթերցողին հասան «Գարունից», դրանք անբռնազբոս, հայրենիքի, երկրի, հողի ու տեսակի կողը կրող գործեր էին, որոնք հեշտ ու թեթեւ ընթերցվելով, սակայն, ընթերցողին գցում էին մտքերի մեջ, սովորական կյանքի մեջ Վրեժի տեսածը փնտրելու մղում զարթնեցնում: Դրանք նաեւ մրցանակների են արժանացել: Հեռուստատեսությամբ բեմադրվել է նրա «Ձնվածված աշխարհամաս» պիեսը, Արցախյան պատերազմի, նրա զինվորների մասին պատմող մի շարք հեռուստաֆիլմերի սցենարների հեղինակ է: Գրողների միության Դերենիկ Դեմիրճյանի անվան մրցանակի է արժանացել Վրեժ Իսրայելյանի «Տնապետ» գիրքը՝ լույս տեսած 2010 թվականին:

«Գրողը մեղավոր է ամեն ինչի համար, նույնիսկ ուշացած անձրեւի եւ անպատեհ խփող կարկուտի համար», ասում էր Վրեժ Իսրայելյանը՝ չկարողանալով անտարբեր լինել իր շուրջը կատարվող լավ ու վատ բաների հանդեպ, միաժամանակ երբեք չտրվելով պաթետիկ հովերին, թայֆայականությանը, նեղմտությանը ու ամեն ինչին նայելով երկրի տիրոջ զգացումով: Ու հենց այդ պատուհանից ստեղծելով իր պատմվածքները, որոնցից յուրաքանչյուրը պատկերային գրականության դասական օրինակ է:

«Հենց նեղն եմ ընկնում՝ մուսան դուռս թակում է», գրել է մի անգամ Վրեժ Իսրայելյանը: Էս անգամ մուսան չհասավ...

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**Վրեժ Իսրայելյանի** հրաժեշտի արարողությունը տեղի կունենա այսօր, հունիսի 15-ին, ժամը 14.30-ին, Հայաստանի Գրողների միության դահլիճում: Հոգեհանգիստը՝ նույն օրը, ժամը 18.00-ին Աշնակ գյուղում: Հուղարկավորությունը հունիսի 16-ին ժամը 14.00-ին Աշնակ գյուղում:

ՀՀ մշակույթի նախարարություն

# «Արարատբանկը» ամրապնդել է դիրքերը

*Բանկի գլխավոր տնօրեն Աշոտ Օսիպյանը փայլուն գնահատեց բանկի գործունեության արդյունքները*

**2012-ին «Արարատբանկը» ունեցել է 3,3 մլրդ դրամ մաքուր շահույթ: Երեկ տեղի ունեցած բանկի բաժնետերերի տարեկան ժողովում այս եւ բանկի մյուս ցուցանիշների մասին խոսեց «Արարատբանկի» գլխավոր տնօրեն Աշոտ Օսիպյանը: Նա անցյալ տարվա բանկի գործունեության արդյունքները փայլուն գնահատեց, նշեց, որ բանկն ամրապնդել է դիրքերը Հայաստանի եւ միջազգային ֆինանսական շուկաներում, ապա թվարկեց մյուս ցուցանիշները: Բանկի ակտիվներն աճել են մոտ 30 տոկոսով եւ կազմել 113 մլրդ դրամ, վարկերը՝ մոտ 40 տոկոսով եւ կազմել 53 մլրդ դրամ, իսկ 2013-ի 5 ամիսներին արդեն հասել են 58 մլրդ դրամի: Աշոտ Օսիպյանն ընդգծեց, որ գերակշռում են փոքր եւ միջին բիզնեսին տրված, էներգախնայողության եւ լիզինգի վարկերը: Այս տարի սկսվել է գյուղացիական վարկերի տրամադրումը, բայց դեռեւս փոքր ծավալներով:**

**«Արարատբանկի» պարտավորությունները 2012-ին աճել են 29 տոկոսով եւ կազմել 97 մլրդ դրամ, հաճախորդներից ներգրավված միջոցները՝ 25 տոկոսով եւ կազմել 63 մլրդ դրամ, իսկ հաճախորդների թիվը՝ 18 տոկոսով եւ կազմել 167 հազար, թողարկված պլաստիկ քարտերի քանակն էլ ավելացել է 20 տոկոսով եւ հասել է 103 հազարի: Ինչպես հայտնեց Աշոտ Օսիպյանը, անցյալ տարի բանկի մասնաճյուղերի թիվն ավելացել է 4-ով, հասնելով 42-ի: Բանկը համագործացության մի քանի պայմանագրեր է կնքել միջազգային ֆինանսական կառույցների՝ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի, Եվրասիական զարգացման բանկի, գերմանական «Կոմերցբանկի», բելգիական «Ինկոֆին» ներդրումային կազմակերպության հետ, ներգրավել ֆինանսական միջոցներ: Անցյալ տարի «Արարատբանկը» շարունակել է թողարկել պարտատոմսեր, այդ թվում առաջին անգամ՝ դոլարային: Ավստրիական Raiffeisen բանկի կողմից ճանաչվել է փոխանցումների բարձր որակ ապահոված լավագույն բանկը Հայաստանում:**

**Այս տարի նախատեսված ծրագրերից «Արարատբանկի» գլխավոր տնօրենը հիշատակեց ֆակտորինգային ծառայությունների մատուցումը, էներգախնայողության վարկերի ավելացումը, բաժնետոմսերի թողարկումը Լոնդոնի բորսայում եւ այլն:**

**Բանկի տարեկան ժողովին մասնակցում էր ԿԲ նախագահի Արթուր Ջավադյանը: Իր ելույթում նա նշեց, որ «Արարատբանկը» մշտապես իր ներդրումն է ունենում ֆինանսական համակարգի զարգացման գործում, աչքի է ընկնում կառավարման բարձր արդյունավետության, վարկավորման ծավալներով եւ վարկերի բարձր որակով, բանկի ծառայությունները հասանելի են Հայաստանի մարզերում եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, աչքի է ընկել կապիտալի շուկայում:**

**«Արարատբանկի» գործընկեր ՎԶԵԲ ներկայացուցիչ Վալերիու Ռազլոգն իր ելույթում հայտնեց, որ «Արարատբանկի» հետ համագործակցում են 2007-ից, համատեղ 7 ծրագիր են իրագործել Հայաստանում՝ 30 մլն դոլար ընդհանուր արժողությամբ: Նա տեղեկացրեց, որ նոր պայմանագիր է ստորագրվելու առեւտրի ֆինանսավորմանը «Արարատբանկի» մասնակցության մասին, որը կնպաստի նաեւ Հայաստանից արտահանմանը:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՍԱՄԱՆԹԱ ՓԱՈՒԵՐԻ ՕՐԻՆԱԿԸ

# Միայն իշխանության ձգտում եւ ոչ մի ազնվություն

*1-ին էջից*

**Այն փաստը, որ սենատոր Ջոն Մկքեյնի (հանրապետական Արիզոնայից) նման ռազմատենչ մի մոլագար հավանություն է տվել նրա թեկնածությանը, շատ բան է ասում Փաուերի շրջադարձի մասին: Առավել անկողմնակալ բնութագրում է տալիս Փաուերի եւ Ռայսի մասին Սան Դիեգոյի համալսարանի խաղաղության ուսումնասիրությունների ֆակուլտետի դեկան, ՄԱԿ-ում խաղաղության պահպանմանը վերաբերող հարցերի նախկին ավագ խորհրդատու Էդուարդ Ս. Լաքը, որն ասում է. «Հինգ տարի առաջ ոչ ոք չէր կարող կանխագուշակել, թե ուր կհասնեն նրանք այս օրերին: Նրանք, երկուսն էլ, իդեալիստներ էին, բայց այժմ նրանք դարձել են գործնական իդեալիստներ: Կառավարությունում անցկացրած ժամանակը այդպիսին է դարձնում մարդկանց»:**

**Նույն խոսքերը կարելի է ասել նաեւ Օբամայի մասին:**

**Մենք ամբողջական տեղեկություն չունենք, թե որպես Օբամայի թիմի ավագ աշխատակից Փաուերն ինչ համաձայնության է եկել թուրք առաջնորդների հետ եւ ինչ պարտավորվածություններ է ստանձնել Մ. Նահանգների կառավարության անունից, բայց սկզբունքներին դավաճանելու հանգամանքն ինքնին խոսում է այն մասին, որ հանուն կարիերայի առաջխաղացմանը նա վաճառել է իր հոգին: Ցեղասպանության հարցի վերաբերյալ նրա կտրուկ շրջադարձը եւ նախագահին էլ իր խոստումից հետ պահելու փորձերը ամբողջովին բնութագրում են նրա կերպարը: Մնացածը դժվար չէ կռահել նրա գործունեությունից, որը տեսանելի է հասարակությանը:**

**Կարծիք կա, որ Սամանթա Փաուերն ու Սյուզան Ռայսն են ճարտարապետները Սպիտակ տան այսպես կոչված «մարդասիրական միջամտության» քաղաքականության, որը նախագահ Օբամային համոզեց «մարդասիրական նպատակներով» տապալել Մուամմար Քադդաֆիին Լիբիայում: Մարդասիրության ի՞նչ քանակություն արդյոք անհրաժեշտ էր Փաուերին՝ առաջ տանելու համար ինքնիշխան մի պետություն ներխուժելու իր դիվային ծրագիրը: Նույնիսկ եթե հաշվի չառնենք այդ «մարդասիրական ներխուժման» հետեւանքով տեղի ունեցած Մ. Նահանգների դեսպան Քրիս Սթիվենսի սպանությունը, մենք դրական ոչ մի փոփոխություն այդ երկրում չենք նկատում: Մինչեւ օրս Լիբիայում կոտորածներ են տեղի ունենում, եւ քաղաքական անկայունության մթնոլորտն էլ ակնհայտ է:**

**Մի կողմ թողնելով տարօրինակությունները՝ պետք է նշել, որ Քադդաֆին ստեղծել էր Մերձավոր Արեւելքում ամենահավասար հասարակությունը, որտեղ նավթի եկամուտները բաշխվում էին ժողովրդին, եւ ոչ թե ծախսվում անձնական պերճասիրության վրա, ինչպես Ալիեւներն են անում, մինչ ազերի միլիոնավոր փախստականներ խղճուկ ավաններում մատնված են թշվառության: Լիբիա ուղարկվեցին վարձկաններ, որոնք պետք է ապստամբություն բարձրացնեին, իսկ ՆԱՏՕ-ի ռմբակոծումներն էլ ավարտեցին գործողությունը, Չինգիզխանական ոճի վայրագությամբ սպանելով Քադդաֆիին եւ հեռուստատեսությամբ ցուցադրելով կատարվածը: Երկրում ծայր առան արյունահեղությունները, որոնք մինչ օրս շարունակվում են: Սա է Փաուերի «մարդասիրական ներխուժման» քաղաքական առաքելության արդյունքը:**

**«Մարդասիրական ներխուժման» մեկ այլ դրսեւորում կարելի է համարել նաեւ 1994-ի դեպքերը Ռուանդայում, երբ ՄԱԿ-ի խաղաղապահ զորքերի հրամանատարը զգուշացրեց, որ այնտեղ ցեղասպանություն է իրականացվելու: Զգուշացումը անտեսվեց, որովհետեւ ինչ-որ մի խմբավորման ձեռնտու էր, որ 800 հազար թութսիներ սպանվեն հութուների ձեռքով՝ ընդամենը հարյուր օրերի ընթացքում: Ցեղասպանությունը կատարվեց Բիլ Քլինթոնի նախագահության օրոք, եւ չմիջամտելու ու չկանխարգելելու համար ներողություն խնդրելու նպատակով դեպի Կիգալի կատարած նախագահի այցը բոլորովին էլ անկեղծ չէր: Այն չափազանց քիչ էր եւ չափազանց ուշացած:**

**Իսկ Սամանթա Փաուերի քաղաքական անկայունության ամենացայտուն օրինակը նրա շրջադարձային դիրքորոշումն էր իսրայելա-պաղեստինյան հակամարտության հարցում: Նախքան կառավարության մաս կազմելը նա հայտարարել էր, որ Մ. Նահանգները պետք է «վիթխարի» պարտավորվածություն հանձն առնի՝ ստեղծելու համար պաղեստինյան անկախ մի պետություն: Նման քայլը, ըստ «Նյու Յորք թայմսի», նշանակում էր «օտարացնել ամերիկացի հրեաներին», որոնք, Փաուերի բնորոշմամբ, «հսկայական քաղաքական եւ ֆինանսական ռեսուրսների տեր են»:**

**Հետագայում իսրայելական քարոզչական խմբավորումներից «թողություն հայցելու» նպատակով նա ներողություն խնդրեց պաղեստինցիների իրավունքների վերաբերյալ իր կատարած ակնարկների համար:**

**Տխուր փաստ է արձանագրել, որ որեւէ քաղաքական գործիչ կարող է այդքան ստորանալ, որ հանուն կարիերայի առաջխաղացման, «թողություն հայցի» քարոզչական խմբավորումներից: Բայց դա իր արդյունքը տալիս է: Նրա վերնշյալ թեկնածությանը հավանություն են տվել Վաշինգտոնում Իսրայելի դեսպան Մայլք Բ. Օուենն ու ազգային հակազրպարտչական լիգայի տնօրեն Աբրահամ Ֆոքսմանը: Վերջինս նշել է. «Նա (Սամանթան- Հ. Ծ.) հասունացել է եւ առաջ գնացել: Ես անհամբերությամբ սպասում եմ, որ ՄԱԿ-ում կաշխատեմ նրա հետ»:**

**«Նյու Յորք թայմսի» հոդվածը ակնարկում էր, որ պաղեստինցիների իրավունքները պաշտպանելուց հրաժարվելը ճանապարհ է հարթել Փաուերի համար ստանալու Սենատի պաշտպանությունը իր թեկնածության հարցում: «Նա նաեւ լավ հարաբերություններ է մշակել ամերիկացի հրեաների խմբավորումների հետ սկսած 2011 թվականից, երբ 40 ղեկավար անձնավորությունների հետ հանդիպումներում նա ցավ է հայտնել, որ երբեմն անհարկի դատողություններ է կատարել, եւ հավաստիացրել է, որ բոլորովին էլ հակա-իսրայելական հակվածություն չունի», գրում է թերթը:**

**Եթե Փաուերը դադարել է պաղեստինցի ժողովրդի իրավունքների պաշտպանը լինելուց, մենք ոչ մի երաշխիք չունենք, որ նա նաեւ ներողություն խնդրած չլինի թուրք առաջնորդներից՝ հայերի ցեղասպանության հարցում իր սկզբնական դիրքորոշման համար:**

**Ամենայն հավանականությամբ նա հեշտությամբ հաղթանակ է տոնելու Սենատի առաջիկա լսումների ժամանակ, եւ մենք մի երկերեսանի բարեպաշտի ենք ուղարկելու ՄԱԿ՝ ներկայացնելու Մ. Նահանգների շահերը:**

**Փաուերի պարագան լիովին հաստատում է այն կարծիքը, որ քաղաքականությունն ու բարոյականությունը իրարից շատ հեռու հասկացություններ են: Հավելյալ փաստեր պետք չեն:**

Թարգմ. Հ. Ծ.

## ԽՈՆԱՐՀՈՒՄ

# 1915 թ. հունիսի 15-ին կախաղան հանված հնչակյան 20 նահատակների հիշատակին

XIX դարի երկրորդ կեսին երկարդարյա ընդարմացումից հետո սկսված հայոց վերազարթոնքը, որը Բեռլինի վեհաժողովում բանաձեւվեց որպես Հայկական հարց, վճռական փուլ թեւակոխեց այդ նույն Բեռլինից հիասթափված եւ «երկաթե շերեփի» եզրույթը որդեգրած ժողովրդի ճակատագրով հետաքրքրված բոլոր շերտերի ու խավերի շրջանում: Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարն աստիճանաբար հանգեց կազմակերպական բարձրագույն ձեւին՝ կուսակցություններ ստեղծելու գաղափարին: 1885 թ. Վան-Վասպուրականում ծնվեց Արմենականը, որն առաջինին հատուկ թուլությունն ուներ, կազմված էր բացառապես տեղացիներից, հետեւաբար՝ խիստ զգուշավոր էր, ինչի արդյունքում էլ համազգային ընդգրկումներ չունեցավ:

1887 թ. քաղաքական ասպարեզ իջավ հայ իրականության մեջ առաջին համազգային մասշտաբի եւ համամարդկային գաղափարախոսություններից տվյալ ժամանակում ամենաառաջադիմականի կրող ու քարոզիչ Հնչակյան կուսակցությունը: Մի ուժ, որն իր բերած գաղափարների թարմությամբ, կազմակերպական մակարդակով ու հախուռն, թափառաս, վճռական եւ հանդուգն գործելակերպով շատ արագ տարածվեց աշխարհի հայաշատ վայրերում, Օսմանյան կայսրությունում ու, իհարկե, նաեւ Արեւմտյան Հայաստանում:

Հնչակյան կուսակցության բազմադրվագ ամբողջական պատմության ներկայացումը մեր խնդիրը չէ այսօր: Ուղղակի նշենք, որ ինչպես մեր ավանդական մյուս բոլոր կուսակցությունների, այնպես էլ ՍԴ Հնչակյանի պատմությունը՝ հերոսական լինելով հանդերձ, բազմաշերտ է ու բազմաբովանդակ: Սակայն բոլոր դեպքերում եւ բոլոր ժամանակներում այն ունեցել է մեկ հիմնական բովանդակություն՝ հայ ժողովրդի ազատության ու մարդավայել ապրելու իրավունքի նվաճումը: Այս պատճառով էլ կուսակցության պատմության ցանկացած փուլ պիտի դիտարկել նախ եւ առաջ այս տեսանկյունից: Չմոռանալով երբեք, որ իր տարբեր գաղափարախոսական դրսեւորումներով հանդերձ, այդ պայքարը սերտորեն շաղկապված է Հայոց ցեղասպանությանը եւ, անկախ տարբեր անհիմն որակումներից, ՍԴՀԿ-ն էլ մյուս բոլորի նման, ինքն էլ դարձավ այդ մարդկային մեծագույն ոճիրի զոհը:

XIX դարի վերջերին եւ XX դարի սկզբներին կապիտալիստական հարաբերությունների բուռն զարգացման շրջապտույտում հայտնված գերհզոր տերությունները իրենց արբանյակներով տենդագին նախապատրաստվում էին աշխարհը վերաբաժանելու: Բոլորի համար հստակ էր, որ մեծ ու աննախադեպ, աշխարհակործան պատերազմ էր լինելու: Բոլորն էլ պատրաստվում էին այդ արհավիրքին ինչ-որ կերպ դիմակայելու, քչազոհ դրանից դուրս գալու համար: Անխուսափելի դարձած պատերազմն իր յուրակերպությամբ ընկալվում էր նաեւ հայոց մեջ:

Թուրքիայում իշխող երիտթուրքական կուսակցությունը պատերազմի նախաշեմին վերջ տվեց հայամետ սիրախաղերն ու, արդեն 1913 թ., փաստորեն, խզել էր հարաբերությունները ՀՅԴ-ի, ՀՍՌԿ-ի, ՍԴՀԿ-ի հետ: Ստեղծված քաղաքական բարդ իրադրությունում ճիշտ կողմնորոշվելու եւ կուսակցության ծրագրային դրույթները նոր պայմաններին համապատասխան հստակեցնելու համար 1913 թ. սեպտեմբերի 7-ին Ռումինիայի Կոստանցա քաղաքում գումարվեց կուսակցության 7-րդ համագումարը, որին մասնակցում էին 59 պատգամավորներ՝ հետեւյալ համամասնությամբ՝ Թուրքիայի 64 մասնաճյուղերից ժողովին ներկա էին 17, ԱՄՆ-ի 30-ից՝ 30, Ռումինիայի 3-ից՝ 5, Բուլղարիայի 4-ից՝ 4, Կովկասի 4-ից՝ 1 եւ Եգիպտոսից ու Իրանից՝ մեկական պատգամավոր: Այսինքն՝ ժողովն ըստ էության կուսակցության ամբողջական պատկերը չէր ներկայացնում, քանի որ այնտեղ Երկրից 64-ի փոխարեն ներկա էին ընդամենը 17 պատգամավորներ, որոնց սթափեցնող ձայնն, ըստ էության, անլսելի մնաց պատգամավորականում:

Այլ կարեւոր որոշումների (անցնել անլեգալ գործունեության, հաշվի առնելով հասունացող ճգնաժամային իրավիճակը՝ առաջնահերթություն տալ ինքնապաշտպանությանը եւ այլն) հետ միասին կուսակցության համագումարն ընդունել էր նաեւ մի գաղտնի որոշում Իթթիհադի պարագլուխներ Թալեաթին, Էնվերին եւ մի շարք այլ ղեկավարների ֆիզիկապես ոչնչացնելու մասին: Որոշում, որն անընդունելի էր, հատկապես կուսակցության Կ. Պոլսի հնչակյանների խմբի կողմից: Դրան դեմ էին Մուրատը, Վանի հնչակյանները, մասնավորապես Արտաշես Սոլաքյանը եւ ուրիշ շատ գործիչներ: Սակայն 7-րդ պատգամավորականում կուսակցության կենտրոնական վարչության անդամներ ընտրված Սապահ-Գյուլյանի, Վարազդատի եւ Փարամազի ղեկավարությամբ ընդունված այդ կամայական որոշումը դրվեց կատարման գործընթացի մեջ:

Սապահ-Գյուլյանը Եգիպտոսում վարձում է ահաբեկիչների եւ ուղարկում Կ. Պոլիս: Սակայն այս ձեռնարկն ի սկզբանե դատապարտված էր ձախողման, քանի որ Եգիպտոսի մասնաճյուղից Կոստանցայի ժողովի պատգամավոր ընտրված Արթուր Եսայանը (իսկական անունը՝ Արշավիր Սահակյան) այդ մասին մատնել էր թուրքական համապատասխան ծառայություններին: 1913 թ. աշնանը հնչակյանները գաղտնի հարաբերությունների մեջ մտան հակաիթթիհադական դիրքերի վրա կանգնած ալբանացիների հետ, որոնց ղեկավարում էր բժիշկ Իբրահիմ Թեմոն: Նրանց հարաբերությունները հանգեցրին նրան, որ երկու կողմերը համաձայնեցին միասնաբար պայքարել իթթիհադականների դեմ: Սակայն Եսայանի մատնության հետեւանքով Թալեաթի ենթադրյալ ահաբեկիչները Կ. Պոլսում կալանավորվեցին, որից հետո սկսվեցին հնչակյանների զանգվածային ձերբակալությունները:

Նույն օրը՝ 1914 թ. հուլիսի 16-ին Կ. Պոլսում ձերբակալվում են մահափորձի գործողության ղեկավար Փարամազը, Մուրատը, Արծրունին, դոկտոր Պեննեն, Հմ. Արամյանցը, Հ. Ճանկյուլյանը եւ ուրիշներ՝ շուրջ 120 մարդ: Թալեաթի հրամանով, հարցաքննվելուց հետո, ազատ արձակվեցին Մուրատն ու դոկտոր Ջելալը, Ճանկյուլյանն ու Արամյանցը եւ էլի մի քանի հոգի: Ընդհանուր առմամբ, ձերբակալվածների մեծ մասը կաշառքի, ազդեցիկ միջնորդությունների եւ այլ միջոցների շնորհիվ ազատ արձակվեց, իսկ ոմանք էլ անմեղ ճանաչվեցին: 28 հոգու գործերի հետաքննությունը հանձնվեց ռազմական դատարան: Դատավարությունն սկսվեց 1915 թ. ապրիլի 28-ին: Ձերբակալվածները մեղադրվում էին Հայաստանի ինքնավարություն



ՖՈՏՈԼՈՒՐ

պահանջելու եւ Թալեաթի դեմ մահափորձի կազմակերպման համար:

Հնչակյանների դատավարությունն ավարտվեց 1915 թ. մայիսի 14-ին: Թուրքիայի ռազմական դատարանի վճռով 22 հոգի դատապարտվում են մահվան, որոնցից երկուսի նկատմամբ վճիռն արձակվեց հեռակա կարգով, քանի որ նրանք՝ Սապահ-Գյուլյանն ու Վարազդատը գտնվում էին արտասահմանում:

Հեռակա մահվան դատավճիռ էր կայացվել նաեւ Պողոս Նուբար փաշայի նկատմամբ, քանի որ նա էր պայքարում Անկախ Հայաստանի ստեղծման համար:

Մահապատիժն ի կատար ածվեց 1915 թ. հունիսի 15-ին Կ. Պոլսի Սուլթան Բայազեդի հրապարակում հնչակյան 20 գործիչների նկատմամբ; Կախաղան բարձրացվեցին Փարամազը, Հակոբ Գազազյանը, Պետրոս Թորոսյանը (դոկտոր Պեննե), Ռուբեն Կարապետյանը (Վահան Պոյաճյան), Մինաս Քեշիշյանը, Սմբատ Գըլըճյանը, Աբրահամ Մուրադյանը, Արամ Աչըգպաշյանը, Գուրգեն Պողոսյանը, Հրանտ Եկավյանը, Պողոս Պողոսյանը, Հակոբ Պասմաճյանը, Վահան Թովմասյանը, Երեմիա Մանանյանը, Մկրտիչ Երիցյանը, Գեղամ Վանիկյանը, Երվանդ Թոփուզյանը, Հովհաննես Եղիազարյանը, Գառնիկ Պոյաճյանը, Արմենակ Համբարձումյանը:

Ներկաների վկայությամբ, դատապարտվածների մեծ մասը համարձակ ու անվեհեր էին դիմավորել մահը: Պեննեն բղավել է. «Մեզ, քսանս կկախեք, բայց քսան հազարներ պիտի հետեւին մեզի», Փարամազն էլ հայտարարել՝ «Դուք մեր մարմինը կրնաք սպանել, բայց մեր գաղափարը՝ ոչ»:

Անկասկած, կատարվածը եղեռնագործություն էր, ցեղասպանության ծիրում տեղավորված, եւ ոչ մի արդարացում չունի: Իսկ այսօր՝ պատմական հեռվից հարկավոր է խիստ զգույշ լինել, տեր կանգնել մեր անմեղ զոհերի պահանջատիրությանը եւ թույլ չտալ, որ հանկարծ այն որեւէ կերպ ձեւախեղվի: Դրա համար հարկավոր է նկատի ունենալ.

Հնչակյան կուսակցության ցանկացած ձեռնարկ եւ հատկապես 20-ի գործով բոլորի պայքարը չի կարելի թույլ տալ, որ ներկայացվեն որպես սոցիալական, առավել եւս՝ դասակարգային պայքարի դրսեւորում, որպիսի միտում երբեմն նկատվում է ներօրյա Թուրքիայում: Հարկավոր է մեկընդմիշտ գիտակցել, որ մեզ՝ հայերիս համար, առաջնայինը ազգային խնդիրն էր, հայի ապրելու, քաղաքակիրթ վիճակում ապրելու իրավունքը, իսկ մնացած հարցերը երկրորդվում էին ազգայինին եւ, ընդամենը, դրան հասնելու միջոցների ընտրության հարցն էր տարբեր:

Հարկավոր է մեկընդմիշտ ըմբռնել ու բոլորին պարզաբանել, որ «20-ի գործն» ընդամենը Հայոց ցեղասպանության օրենսդրական, դատավարական ֆարս գործընթացի ձեւով դրսեւորումներից մեկն էր: Յուրաքանչյուր ոք, ով կանդրադառնա այս խնդիրներին, պետք է այս «Գործը» դիտարկի ցեղասպանության ծիրում ու որպես նրա անքակտելի մի մասը: Հետեւապես, որպես Մեծ եղեռնի մի դրվագ, այն շարունակաբար պիտի լուսաբանվի եւ, նկատի ունենալով ցեղասպանության 100-ամյա մոտալուտ տարելիցը, ավելի զգուշավոր, պատճառաբանված, իրատեսական, փաստառատ դրույթներով ու մոտեցումներով, որպեսզի, մեծ ցանկության դեպքում նույնիսկ, հակառակորդին խուսանավելու, պատասխանատվությունից խուսափելու որեւէ հնարավորություն չթողնվի:

Ի դեպ, օդի նման անհրաժեշտ է, որ այսօր, ցեղասպանության խնդիրը քննարկելիս հաշվի առնվեն, հատկապես, բոլոր այն հետեւանքները, որոնք մեզ որպես ժառանգություն մնացին հենց ցեղասպանության հետեւանքով: Կորսվեց մի ողջ սերունդ, որի զավակներն ու թոռները կենդանի մնացածների հետ միասին պիտի պայքարեին, պահանջատեր լինեին, այդպես էլ լույս աշխարհ չեկավ: Սովորաբար շրջանառվում է մեկուկես միլիոն կորուստի թիվը: Բայց եթե հաշվի առնենք, որ յուրաքանչյուր 25 տարին մեկ սերնդափոխություն է լինում, ապա ամենասեղմ հաշվումներով նույնիսկ՝ որպես ցեղասպանության հետեւանք այսօր մենք ունենք առնվազն 7-8 մլն չծնված հայություն:

Իսկ ինչ վերաբերում է նյութական կորուստներին, որոնք Պողոս Նուբարի հապճեպ հաշվումներով 19,2 մլրդ էին, ապա, մեր խորին համոզմամբ, պիտի հաշվառենք նաեւ հետեւանքները: Այս հարցն էլ բաց է մնացել այսօր: Չմանրամասնելով նշենք, որ ամենազուսպ հաշվումներով դրանք կազմում են շուրջ 50 մլրդ:

Անչափ կարեւոր է, որ պատմական այս կամ այն իրավիճակ կամ կուսակցությունների պատմության հետ կապված դիտարկումներ կատարելիս նկատի ունենալ, որ հարկավոր է նախ ցեղասպանության ճանաչումը տարբերակել հատուցումից եւ հետո պայքարել, որ մեզանում օրենսդրորեն հստակեցվի ցեղասպանության հարցը եւ պահանջատիրությունը, որպեսզի ամեն մի նոր վարչակարգ իր սուբյեկտիվ մոտեցումներով ու կամայական որակումներով հանդես չգա:

Հարկավոր է նաեւ հասնել այն բանին, որ ՄԱԿ-ը համապատասխան պաշտոնական բանաձեւ ընդունի: Հակառակ դեպքում, մենք միշտ խնդիրներ ենք ունենալու ցեղասպանությունը Թուրքիային ճանաչել տալու գործում: Հենց այստեղ էլ զգալի պիտի լինի նաեւ մեր ավանդական կուսակցությունների դերակատարությունը:

Հստակ է, որ 100-ամյակը պետք է վերածենք ջրբաժան գծի, որտեղ հայերս, անցնելով հիշատակությունների փուլը, կանգնենք ամուր քաղաքական միասնական հիմքերի վրա, դառնալով մարտնչող միասնական բռունցք, ինչին իրենց անփոխարինելի ներդրումը պիտի բերեն կուսակցությունները: Այս առումով մեզ համար հստակ պիտի պարզաբանվի, թե ի՞նչ դերակատարություն պիտի ունենա Հայաստանի Հանրապետությունը՝ որպես միջազգային իրավական սուբյեկտ եւ ի՞նչ՝ Սփյուռքը՝ իր ներուժով ու լոբբինգի հսկայական պաշարներով:

Մեր խորին համոզմամբ, հենց այս պարագային էլ ստորադասված պիտի իրենց ծրագրային դրույթներից բխող դերաբաշխում լինի ավանդական կուսակցությունների միջեւ, ելակետ ունենալով այն, որ նրանք լրացնեն միմյանց:

Այսօր, 20 անմեղ նահատակների տարելիցին, մեր հարգանքի տուրքը մատուցելով նրանց պայծառ հիշատակին, խոնարհվելով նրանց հիշատակի առջեւ, վստահաբար կարող ենք արձանագրել. շնորհիվ ձեզ՝ այսօր կա, ապրում եւ արարում է հայ ժողովուրդը, կռում հաղթանակներ, որոնց արմատները սնվում են ձեր ազատատենչ, գիտակցված նահատակ հոգիներից: Հոգիներ, որոնք վառ փարոսի դերակատարությունն ու կոչումն ունեն մեր գալիք սերունդների համար:

**ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ**
պգք, դոցենտ
ՌԱԿ Հանրապետական վարչության ատենադպիր

ԹՈՒՐՔԻԱ

# Հանրահավաքներ արտասահմանում՝ ի պաշտպանություն վարչապետ Էրդողանի


ՖՈՏՈԼՈՒՐ

Այդ մասին տեղեկացրել էր «Դունիա բուլթենի» կայքէջը: Արտասահմանյան հանրահավաքներից առաջին երկուսը՝ ի պաշտպանություն Թուրքիայի վարչապետ Էրդողանի, կազմակերպվել է երեկ Մակեդոնիայում եւ Բոսնիա-Հերցեգովինայում: Մասնակիցները հանդես են եկել «Պինդ կաց, մի ընկրկիր, Բալկանները քեզ հետ են» կարգախոսով: Այսօր նախատեսվում է նոր հանրահավաքների կազմակերպումը ԱՄՆ-ում, Մալայզիայում, Ինդոնեզիայում, Եմենում եւ Գազայում: Ամերիկյանը կանցկացվի «Վերջ քաոսին» կարգախոսով:

Արտասահմանյան հանրահավաքները որքանո՞վ կնպաստեն Թուրքիայում Թաքսիմ հրապարակի «Գեզի» այգու ցույցերով խաթարված կարգուկանոնի վերականգնմանը, դժվար է ասել: Բայց որ հանրահավաքների է պատրաստվում վարչապետ Էրդողանը, եւ դրանք յուրահատուկ մարտահրավեր են լինելու ինչպես ցուցարարներին, այնպես էլ վերջիններիս քաջալերող արեւմտյան երկրներին ու կառույցներին, ակնհայտ է:

Էրդողանի նախաձեռնած հանրահավաքներից առաջինն այսօր կիրավիրվի Անկարայում: Ենթադրվում է, որ դրան կմասնակցի շուրջ մեկ միլիոն մարդ: Երկրորդը կիրակի օրը կկազմակերպվի Ստամբուլում, իսկ երրորդը՝ չորեքշաբթի Իզմիրում: Այս հանրահավաքները ցուցարարների պարագայում կստանան սաստելու բնույթ, իսկ ցուցարարներին անվերապահ աջակցող արեւմտյան երկրների համար կհանդիսանան Թուրքիայում իշխող «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության ժողովրդականության վկայություն:

Հիրավի, եթե վարչապետ Էրդողանը հրաժարական տա եւ երկրում նշանակվեն արտահերթ խորհրդարանական ընտրություններ, ապա նրա «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը վերստին իշխանության կգա երկրում նորից միանձնյա: Այս իրողությունը գիտակցում են «համաժողովրդական դիմադրություն» կոչված ցույցերի կազմակերպիչները, որ կառավարության ամեն մի առաջարկին հակադրվելիս մերժում են նաեւ վաղաժամկետ ընտրությունների գաղափարը, պատճառաբանելով, թե Էրդողանի կուսակցությունը նորից կհաղթի:

Այլ կերպ՝ նրանք ոչ թե որեւէ պահանջ ունեն կառավարությունից, այլ չեն հանդուրժում Էրդողանի իսլամամետ կուսակցության իշխանությունը երկրում: Քանի որ մեծ է այդ կուսակցության ժողովրդականությունը, ուստի անկարգությունները գերադասում են ընտրություններից, որ փաստի առջեւ կանգնեցնեն Էրդողանի կառավարությանը: Բայց՝ ապարդյուն:

Վարչապետ Էրդողանը մարտականորեն է տրամադրված ոչ միայն ցուցարարների, այլեւ եվրոպական կառույցների նկատմամբ: Դրա վկայությունը Թուրքիայի վարչապետի նախորդ օրվա ելույթն էր: Նա, նկատի ունենալով Եվրախորհրդարանի հունիսի 12-ի որոշումը, որտեղ ցուցարարների դեմ ուժի անհամաչափ գործադրման մեղադրանքով դատապարտվել է թուրքական կառավարությունը, ասաց. «Այդ որոշումն անընդունելի է ինձ համար: Նրանք ձա՞նի գլխանի են, որ դատապարտեն մեր կառավարությանը: Սա ի՞նչ ամբարտավանություն է: Մի՞թե չգիտեն, որ Թուրքիան Եվրոմիության անդամ չէ, այլ՝ անդամակցության բանակցություններ վարող երկիր»:

Նրա օրինակին հետեւել էր արտգործնախարար Դավութօղլուն, իսկ ԵՄ-ի գծով պետնախարար Բաղըշը հայտարարել. «Իրավունքի տարատեսակ է նաեւ զառանցանքի ազատությունը: Թող զառանցեն»:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# 7 տարվա ազատազրկում Արգենտինայի նախկին նախագահին



Արգենտինայի նախկին նախագահ Կառլոս Մենեմը 7 տարվա ազատազրկման է դատապարտվել միջազգային արգելքին հակառակ Էկվադորին եւ Խորվաթիային զենք վաճառելու համար:

Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ խնդրո առարկա անօրինական զինավաճառքը իրականացվել է 1990-ականների առաջին կեսին: Ներկայումս սենատորի պաշտոն զբաղեցնող Մենեմի հետ դատվել է պաշտպանության նախկին նախարար Օսկար Կամիլյոնը. նա դատապարտվել է 5 տարվա բանտարկության:

Տվյալ դատավճիռը վերջնական է, եթե միայն երկրի Գերագույն դատարանը չեղյալ չհամարի:

Դատարանը սենատորներից պահանջել է քվեարկել Մենեմին անձեռնմխելիությունից զրկելու օգտին:

Մեկնաբանների կարծիքով՝ 82-ամյա Մենեմը կալանքի կենթարկվի տանը, այլ ոչ թե բանտում:

2012 թվականին հաղորդվել էր, որ Մենեմը կդատվի Բուենոս Այրեսի Հրեական կենտրոնի 1994 թ. պայթեցման գործով: Այն ժամանակ պայթյունից զոհվել էին 85 եւ վիրավորվել 300 անձինք: Դա խոշորագույն ահաբեկչությունն է Լատինական Ամերիկայի պատմության մեջ:

Դատախազության վարկածի համաձայն, Մենեմը քննությունից թաքցրել է պայթեցմանը իր բարեկամի՝ սիրիական ծագումով արգենտինացի գործարար Ալբերտո Խասինտո Կանուրե Էդուլի մեղսակցությանը վերաբերող տեղեկությունները:

Արգենտինա գաղթած սիրիացի ալավիների ընտանիքի զավակ Կառլոս Մենեմը երկրի նախագահն էր 1989-1999 թթ.:

Պ. Ք.

ՀԱՄԱՅԱՆՑ

# Սնոուդենը պատմել է ԱՄՆ-ի կիբեռգրոհների մասին

**ԱՄՆ-ում համացանցի վերահսկման եւ հեռախոսազրույցների գաղտնալսման վերաբերյալ օրերս աղմկալի բացահայտումներ արած ԿՀՎ նախկին աշխատակից Էդվարդ Սնոուդենը հրապարակել է նոր գաղտնի տվյալներ: Ներկայումս Հոնկոնգում գտնվող իրազեկիչը The South China Morning Post թերթի թղթակցին պատմել է ՉԺՀ-ի վրա ամերիկացիների կատարած ցանցահենային գրոհների մասին:**

**Սնոուդենի խոսքերով, վերջին տարիներին ԱՄՆ-ից ավելի քան 61 հազար կիբեռգրոհ է ձեռնարկվել բազմաթիվ երկրների վրա: Հարյուրավոր գրոհներ են ձեռնարկվել Չինաստանի եւ Հոնկոնգի վրա: «Մենք թափանցում ենք համացանցի հսկայական սերվերների մեջ: Դա մեզ թույլ է տալիս ծանոթանալ հարյուրհազարավոր համակարգիչների միջեւ իրականացվող տվյալների փոխանակմանը՝ առանց առանձին համակարգիչները կոտրելու անհրաժեշտության», պատմել է Սնոուդենը:**

**Նա ընդգծել է, որ ամերիկացիները 2009 թվականից հետեւում են ՉԺՀ համակարգչային ցանցերին: Գրոհների թիրախներ են դառնում պաշտոնյաները, գործարարները, ուսանողները: «ԱՄՆ կառավարությունը իր ծրագրերն իրականացնելիս չի հարգել ուրիշներին: Սակայն ամեն ինչի համար պետք է պատասխան տալ», ասել է Սնոուդենը: Նա շեշտել է ԱՄՆ-ի «երկերեսանիությունը», երկիր, որը սեփական հանցագործությունները քողարկելու համար պատրաստ է համանման գործողությունների մեջ ամբաստանել ուրիշներին:**

**Իրենք, ԱՄՆ իշխանությունները քանիցս ենթադրություն էին արել, թե չին ցանցահենները ՉԺՀ ռազմական գերատեսչությունների պահանջով իբր կոտրում են ամերիկացիների տվյալների բազաները: Ըստ որում, ԱՄՆ-ը չէր ներկայացրել իր պնդումը հաստատող կոնկրետ ապացույցներ:**

# ՀԱՀ-ը Լիբիային կվերադարձնի Քադդաֆիի գանձերը



Հարավաֆրիկյան Հանրապետության իշխանությունները հայտարարել են, որ իրենց երկրում հայտնաբերված Մուամմար Քադդաֆիի ակտիվները կվերադարձնեն Լիբիային: Այդ մասին հաղորդում է Լոնդոնի «Թայմս» թերթը: Լիբիայի նախկին ղեկավար Քադդաֆին տապալվել եւ դաժանաբար սպանվել էր 2011 թ. ապստամբության ժամանակ:

ՀԱՀ-ում՝ բանկերում եւ կորպորատիվ պահոցներում Քադդաֆիի թաքցրած գանձերի արժեքն ավելի քան 1 մլրդ դոլար է: Դրանք ոսկու ձուլակտորներ են, ադամանդներ եւ այլ ակտիվներ: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է, որ վերադարձման շուրջը համաձայնություն է ձեռք բերվել ՀԱՀ ֆինանսների նախարար Պրավին Գորդանի եւ Լիբիայի վարչապետի դիվանատան նախարար Ուսամա ալ Աբիդի հանդիպման ժամանակ: «Գորդանը համաձայնեց Լիբիայի կառավարության այն կարծիքին, որ լիբիական միջոցների եւ ակտիվների վերադարձը պետք է իրականացվի ՄԱԿ-ի արձանագրությունների դրույթների համաձայն», ասվում է ՀԱՀ ֆինանսների նախարարության հայտարարության մեջ:

Ենթադրվում է, որ սա Քադդաֆիի ընտանիքի գաղտնի ֆոնդի մի մասն է: Ֆոնդի կառավարիչը Քադդաֆիի շտաբի նախկին պետ Բաշիր Սալիհն է, որին Լիբիայի ներկայիս իշխանությունները որոնում են Ինտերպոլի միջոցով:

Լիբիայի կառավարությունը կարծում է, որ Քադդաֆիի հարստությունը կուտակվել է ապօրինաբար եւ պատկանում է երկրի ժողովրդին: Որոշ տվյալների համաձայն, նախկին բռնապետի ընտանիքի ընդհանուր կարողությունը գնահատվում է 80 մլրդ դոլար:

Լիբիայի իշխանությունները շարունակում են որոնել Քադդաֆիի մյուս ակտիվները, որոնք պահվում են աշխարհի տարբեր երկրների բանկերում ու գաղտնարաններում: Առայժմ նրանց հաջողվել է հայտնաբերել այդ փողերի աննշան մասը:

# Չեխիայում ձերբակալվել են քաղաքական գործիչներ

Կաշառակերության դեմ մղվող պայքարի շրջանակներում Չեխիայում ձերբակալվել է 7 քաղաքական գործիչ: Խուզարկություններից հետո նրանց ներկայացվել են մեղադրանքներ, հաղորդում է Ինտերֆաքս գործակալությունը:

Ձերբակալվածների մեջ են վարչապետի դիվանագիտական տնօրեն Յանա Նագիեւան, կառավարող Քաղաքացիական ժողովրդավարական կուսակցության խորհրդարանական խմբի ղեկավար Պետր Տլուհորը, գյուղատնտեսության նախկին նախարար Իվան Ֆուքսան, առողջապահության նախկին փոխնախարար Մարեկ Շնայդը եւ ռազմական հետախուզության նախկին ղեկավար Օնդրեյ Պալենիկը:

# Կոմիքս


ՀԵՔԻԱԹԻ ՀԵՐՈՍԸ
ToTo
ԶԳՈՒՅՇ.... ԿԱՇԱՌԱԿԵՐ ԴԵՎ Է
ՄԻ ՎԱԽԵՑԵՔ
ԴՐԱ ԳԼՈՒԽԸ ԵՍ ԿԹՌՑՆԵՄ
ՀՈՊ
ՀՈՓ
ՀՈՓ
ՀՈՊԼԱ...

# Հայ ծանրորդները նախապատրաստվում են Ունիվերսիադային



ՖՈՏՈԼՈՒՐ

Հուլիսի 6-17-ը Կազանում կանցկացվեն 27-րդ համաշխարհային ուսանողական խաղերը, որում Հայաստանի մարզիկները հանդես կգան 10 մարզաձեւում: Արդեն հայտնի է ծանրամարտի մրցումներին մասնակցող Հայաստանի թիմի կազմը: Կազանում մրցահարթակ դուրս կգան Սմբատ Մարգարյանը (56 կգ), Աղասի Աղասյանը (85 կգ) եւ Վարդան Դավթյանը (94 կգ):

Մեր ուսանող ծանրորդները հավաքականի գլխավոր մարզիչ Պողոս Պողոսյանի գլխավորությամբ ներկայումս Ծաղկաձորում են նախապատրաստվում մրցումներին: Հավաքի ավարտական փուլը կանցկացվի Աբովյանի մարզաբազայում: Մեր ծանրորդներից սպասելիքները մեծ են: Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Փաշիկ Ալավերդյանը նույնիսկ վստահ է, որ երեքն էլ նվաճելու են Ունվերսիադայի չեմպիոնի տիտղոսը:

Մրցումներին պատրաստվող մեր եռյակից երկուսը՝ Աղասի Աղասյանն ու Վարդան Դավթյանը մասնակցել են 2 տարի առաջ օգոստոսին Չինաստանի Շենցզեն քաղաքում կայացած 26-րդ համաշխարհային Ունիվերսիադային: Աղասի Աղասյանը մինչեւ 77 կգ քաշային կարգում գերազանց ելույթ ունեցավ՝ երկամարտի 337 կգ (151+186) արդյունքով նվաճելով Ունիվերսիադայի չեմպիոնի տիտղոսը: Նա անկախ Հայաստանի առաջին մարզիկն է, որ նման նվաճման հասավ համաշխարհային ուսանողական խաղերում:

Իսկ ահա Վարդան Դավթյանի ելույթն անհաջող էր: Մինչեւ 94 կգ քաշային կարգում նա միայն մեկ մոտեցում հաջող ավարտեց՝ պոկելով 165 կգ-անոց ծանրաձողը: Հրում վարժությունում նա 0 ստացավ՝ չկարողանալով բարձրացնել նախնական 196 կգ-ը: Նշենք, որ քաշային այդ կարգում հանդես եկած մեր 2-րդ պատվիրակի՝ Յուրի Վարդանյանի որդու՝ Նորայրի ելույթը եւս անհաջող էր: Նա պոկում վարժությունում միայն 3-րդ մոտեցմամբ բարձրացրեց 155 կգ, իսկ հրում վարժությանը չմասնակցեց: Չինաստանում մեր հավաքականին 2-րդ մեդալը պարգեւեց գերծանրքաշային Հայկ Հակոբյանը, որը երկամարտի 402 (186+216) կգ արդյունքով արժանացավ բրոնզե մեդալի՝ արծաթե պարգեւը մրցակցին զիջելով միայն անձնական ավելի ծանր քաշի պատճառով: Առանձին վարժություններում էլ Հայկը նվաճեց արծաթե եւ բրոնզե մեդալներ: Իսկ ահա մինչեւ 85 կգ քաշային կարգում Արամ Անդրիկյանը 0 ստացավ:

# Հաղթողի գլխավոր հավակնորդն Իսպանիայի ընտրանին է

Այսօր Բրազիլիայում մեկնարկում է ֆուտբոլի Կոնֆեդերացիաների գավաթի 9-րդ խաղարկությունը: Մասնակից 8 հավաքականները նախնական փուլում ընդգրկվել են 2 խմբերում: A խմբում հանդես կգան Բրազիլիայի, Իտալիայի, Ճապոնիայի եւ Մեքսիկայի հավաքականները: B խմբում ընդգրկված են աշխարհի եւ Եվրոպայի գործող չեմպիոն Իսպանիայի, Ուրուգվայի, Նիգերիայի եւ Հաիթիի ընտրանիները: Մրցաշարը կմեկնարկի այսօր կայանալիք Բրազիլիա-Ճապոնիա հանդիպումով:

Խմբերում 1-2-րդ տեղերը զբաղեցրած հավաքականները կպայքարեն եզրափակիչի ուղեգրի համար: Կիսաեզրափակիչում A խմբի հաղթողը կմրցի B խմբում 2-րդ տեղը գրաված հավաքականի հետ, իսկ B խմբի հաղթողի մրցակիցը կլինի A խմբում 2-րդը ճանաչված թիմը: Հաղթողը հայտնի կդառնա հունիսի 30-ին կայանալիք եզրափակիչ խաղում:

Կոնֆեդերացիաների գավաթի խաղարկությունը յուրօրինակ նախերգանք է հաջորդ տարի Բրազիլիայում կայանալիք աշխարհի առաջնության համար: Այն հնարավորություն կտա ստուգելու ոչ միայն հավաքականների, այլեւ կազմակերպիչ երկրի պատրաստականությունն աշխարհի առաջնությանը:

Առաջին նման մրցաշարն անցկացվել է 1992-ին: Այն կրում էր Ֆահդ թագավորի անունը: Մասնակցում էին 4 երկրների՝ Սաուդյան Արաբիայի, Արգենտինայի, ԱՄՆ-ի եւ Կոտ դ՚Իվուարի հավաքականները: Հաղթող դարձավ Արգենտինայի հավաքականը, որի կազմում խաղում էին Գաբրիել Բատիստուտան, Ֆեռնանդո Ռեդոնդոն, Դիեգո Սիմեոնեն եւ Կլաուդիո Կանիջան:

3 տարի անց անցկացվեց 2-րդ մրցաշարը: 6 թիմերի մրցավեճում հաղթող դարձավ Եվրոպայի չեմպիոն Դանիայի հավաքականը:

1997-ին գավաթի խաղարկությունն արդեն պաշտոնական բնույթ ստացավ: Այն անցկացվեց ՖԻՖԱ-ի հովանու ներքո: Մրցաշարը կրկին անցկացվեց Սաուդյան Արաբիայում եւ ավարտվեց բրազիլացիների փառահեղ հաղթանակով: 5 խաղում բրազիլացիները, որոնց կազմում էին Ռոբերտո Կառլոսը, Կաֆուն, Ռոմարիոն, Դունգան եւ Ռոնալդոն, 15 գոլ խփեցին, որոնցից 6-ը՝ Ավստրալիայի հավաքականի հետ կայացած եզրափակիչ խաղում:

1999-ին Մեքսիկայում անցկացված 4-րդ մրցաշարում հաջողությունն ուղեկցեց տանտերերին, որոնք եզրափակիչում հաղթեցին բրազիլացիներին: 2001-ին Կոնֆեդերացիաների գավաթի խաղարկությունն անցկացվեց Հարավային Կորեայում եւ Ճապոնիայում, որտեղ մեկ տարի անց պետք է կայանար ֆուտբոլի աշխարհի առաջնությունը: Հաջողությունն ուղեկցեց աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն ֆրանսիացիներին, որոնցից Ռոբեր Պիրեսը դարձավ մրցաշարի լավագույն ռմբարկու եւ ճանաչվեց լավագույն խաղացող:

2003-ին առաջին անգամ մրցաշարն անցկացվեց Եվրոպայում՝ Ֆրանսիայում: Թեեւ ֆրանսիացիներն անհաջող էին հանդես եկել 2002-ի աշխարհի առաջնությունում, սակայն սեփական հարկի տակ կարողացան պաշտպանել Կոնֆեդերացիաների գավաթակրի իրենց տիտղոսը: Այդ մրցաշարում ողբերգություն տեղի ունեցավ: Կոլումբիա-Կամերուն կիսաեզրափակիչ խաղում սրտի կաթվածից հենց խաղադաշտում մահացավ կամերունցի Մարկ-Վիվիեն Ֆոեն:

2005-ից Կոնֆեդերացիաների գավաթի խաղարկությունն անցկացվում է այն երկրում, որը հաջորդ տարի պետք է հյուրընկալի աշխարհի առաջնության մասնակիցներին: Գերմանիայում կայացած մրցաշարում մի քանի ռեկորդ գրանցվեց: Ավելի քան 600 հազար հանդիսական հաճախեց 16 հանդիպումներին, որոնցում խփվեց 56 գոլ (միջինը՝ 3,5 գոլ): Հաղթող դարձավ աշխարհի չեմպիոն Բրազիլիայի հավաքականը:

Գավաթի 8-րդ խաղարկությունը կայացավ 2009-ին Հարավաֆրիկյան Հանրապետությունում: Բրազիլիայի հավաքականը դարձավ 2-րդը, որին հաջողվեց պահպանել իր տիտղոսը: Այնպես որ բրազիլացիները պետք է ձգտեն 3-րդ անգամ անընդմեջ նվաճել Կոնֆեդերացիաների գավաթը, ինչն ինքնատիպ ռեկորդ կլինի: Դա անելն այնքան էլ հեշտ չէ, քանի որ մասնագետների մեծ մասը հաղթողի գլխավոր հավակնորդ է համարում իսպանացիներին:

# Յորոն հեռացավ «Շիրակից»

**«Շիրակի» սենեգալցի կիսապաշտպան Լամին Լի Յորոն չի երկարաձգել պայմանագիրն ակումբի հետ ու որոշել է վերադառնալ հայրենիք: Նա Սենեգալում ելույթները կշարունակի նախկին թիմում՝ «Նյարի Տալիում», որի հետ կես տարվա պայմանագիր է կնքել:**

**Լամին Լի Յորոն 2011-ից էր հանդես գալիս «Շիրակում»: Ավարտված առաջնությունում նա աչքի ընկավ արդյունավետ խաղով՝ 18 գնդակով ճանաչվելով թիմի լավագույն ռմբարկու: Ինչ խոսք, Յորոյի հեռանալը զգալի կորուստ է «Շիրակի» համար, որը հուլիսին մեկնարկելու է չեմպիոնների լիգայում: Ճիշտ է, փոխարենը Իրանից «Շիրակ» է վերադարձել Ֆոֆանա Բեկոն, որը եւս արդյունավետ խաղ ցուցադրեց՝ խփելով 14 գոլ:**

ՇԱԽՄԱՏ

# Դավիթ Պառավյանն առաջին կես միավորը կորցրեց

**Բուլղարիայում ընթացող շախմատի մրցաշարի 4-րդ տուրում ռուսաստանցի Դավիթ Պառավյանն առաջին կես միավորը կորցրեց՝ հաշտություն կնքելով Սանթոս Վիդիտի հետ: Հայ շախմատիստին շրջանցեցին Զբինեկ Հրաչեկը, Վլադիսլավ Նեւեդնիչին ու Տամիր Նաբաթին, որոնք վաստակել են 4-ական միավոր:**

**Ավետիք Գրիգորյանը 3 միավորով 15-րդ տեղում է: Նա հաշտություն կնքեց Պետար Դրենչեւի հետ: Նույնպիսի արդյունքով 27-րդ հորիզոնականում է Տիգրան Պետրոսյանը, որը հաղթեց Մաթիաս Ռոյդերին:**



**Տուրն անհաջող էր բրազիլահայ Գրիգոր-Սեւակ Մխիթարյանի եւ բուլղարահայ Վալենտին Փանբուկչյանի համար, որոնք զիջեցին համապատասխանաբար Ալեսանդրո Բոնաֆեդեին եւ Դանի Ռազնիկովին:**

# Կարո Մուրադ-Բեռնարդ Հոպկինս մենամարտը չի կայանա

**Հուլիսի 13-ին Նյու Յորքում հայ պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Կարո Մուրադը պետք է մենամարտեր ամերիկացի հայտնի բռնցքամարտիկ, կիսածանրքաշային կարգում IBF-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Բեռնարդ Հոպկինսի հետ: Սակայն ամերիկյան վիզա ստանալու հարցում բարդություններ են ծագել, ուստի մեծ հետաքրքրություն ներկայացնող այդ մենամարտը չի կայանա: Նշենք, որ Կարո Մուրադը չեմպիոնի տիտղոսի պարտադիր հավակնորդ է:**

**48-ամյա Բեռնարդ Հոպկինսը մտադիր է իր հաջորդ մենամարտն անցկացնել սեպտեմբերին: Նա որպես իր մրցակից ցանկանում է ունենալ ոչ թե Կարո Մուրադին, այլ մյուս վարկածներով չեմպիոններից որեւէ մեկին՝ կանադացի Ադոնիս Սթիվենսոնին, ուելսցի Նատան Կլեւերլիին կամ էլ ղազախ Բեյբութ Շումենովին:**

# Սյուզի Քենտիկյանը ռեւանշ-մենամարտ կանցկացնի




**Հուլիսի 6-ին Դորտմունդում Սյուզի Քենտիկյանը ռեւանշ-մենամարտ կանցկացնի թեթեւագույնքաշային կարգում WBA-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոնուհի Կարինա Մորենոյի հետ: Նրանց նախորդ մենամարտը կայացել էր անցյալ տարվա դեկտեմբերի 1-ին Գերմանիայի Դյուսելդորֆ քաղաքում: 10-ռաունդանոց մենամարտում 31-ամյա ամերիկուհին հաղթել էր միավորներով ու նվաճել WBA-ի չեմպիոնական գոտին: Վերջին մենամարտը Քենտիկյանն անցկացրել է այս տարվա փետրվարին՝ միավորներով հաղթելով գերմանացի Սանայե Ջային:**

**Քենտիկյանը պրոֆեսիոնալ ռինգում անցկացրել է 32 մենամարտ, որից 30-ում հաղթել է, 2-ն ավարտել է ոչ-ոքի: Նրա մրցակցուհին 31 մենամարտերից 25-ում է հաղթել, 5-ում պարտվել է:**

# Անվանի մարզչի 6-րդ հուշամրցաշարը

**Արտաշատում 6-րդ անգամ անցկացվեց Հայաստանի վաստակավոր մարզիչ Կարպուշ Մելիքյանի հիշատակին նվիրված ազատ ոճի ըմբշամարտի մանկապատանեկան մրցաշարը: Մեդալների համար պայքարի էին դուրս եկել 1998-2000-ի ծնված 262 ըմբիշներ: Թիմային հաշվարկով հաղթող ճանաչվեց Արտաշատի թիմը: 2-րդ տեղում վանաձորցիներն են, 3-րդ հորիզոնականը զբաղեցրեց Ջրվեժի թիմը:**

**Քաշային 13 կարգերում մրցաշարի հաղթողներ դարձան Ռաֆայել Հարությունյանը (26 կգ), Ռաֆիկ Արտուշյանը (29 կգ), Կարապետ Գեւորգյանը (32 կգ), Հարություն Մանուկյանը (35 կգ), Արսեն Հարությունյանը (38 կգ), Վազգեն Թեւանյանը (42 կգ), Արման Անդրեասյանը (46 կգ), Գեղամ Գալստյանը (50 կգ), Շավարշ Խաչատրյանը (54 կգ), Գառնիկ Ղազարյանը (58 կգ), Արման Ասատրյանը (63 կգ), Արամայիս Թովմասյանը (69 կգ) եւ Արթուր Շավոյանը (76 կգ):**

# 85 մլն ֆունտ ստեռլինգ Ռոնալդուի դիմաց

**Անգլիական «Մանչեսթր Յունայթեդը» փորձում է ամեն գնով ձեռք բերել Ռոնալդուին կամ «Տոտենհեմի» առաջատար Գարեթ Բեյլին: Ակումբի սեփականատեր Գլեյզերների ընտանիքը պատրաստ է իրականացնել համաշխարհային ֆուտբոլի պատմության մեջ ամենաթանկ տրանսֆերը՝ 85 մլն ֆունտ ստեռլինգով գնել Ռոնալդուին կամ Բեյլին: Իհարկե, առաջնահերթը Ռոնալդուին թիմում ընդգրկելն է: Թեեւ «Ռեալը» պորտուգալացի ֆուտբոլիստին նոր պայմանագիր է առաջարկել, սակայն վերջինս առայժմ հրաժարվում է այն ստորագրել:**

**Հիշեցնենք, որ ֆուտբոլի պատմության մեջ ամենաթանկ տրանսֆերը Ռոնալդուինն է, որի համար «Ռեալը» «Մանչեսթր Յունայթեդին» 2009-ին 80 մլն ֆունտ ստեռլինգ էր վճարել: Իսկ անգլիական ակումբի ամենաթանկ գործարքը կնքվել է 2007-ին, երբ 30,75 մլն ֆունտ ստեռլինգ էին վճարել «Տոտենհեմին» Դիմիտար Բերբատովի համար:**

*էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ Օրվա հետքերով

# Ավարտվեց Արամ Խաչատրյանի անվան միջազգային մրցույթը

## *Առաջին մրցանակը՝ Իոնիցա Անդրեյին*



Երեկ տեղի ունեցավ Արամ Խաչատրյանի անվան 9-րդ միջազգային մրցույթի փակման արարողությունը: Թավջութակահարների մրցույթը մեկնարկել էր Արամ Խաչատրյանի ծննդյան 110-ամյակի օրը եւ անցկացվեց 3 փուլով:

Եզրափակիչ փուլ էին անցել 4 երիտասարդ թավջութակահարներ, որոնցից Իոնիցա Անդրեյը (Ռումինիա) արժանացավ առաջին մրցանակին, Մորոզովա Աննան (Ռուսաստան)՝ երկրորդ, Պերլովա Ալեքսանդրան (Ռուսաստան) եւ Խաչատրյան Գայանեն (Հայաստան) կիսեցին երրորդ մրցանակը:

Առաջին մրցանակակիրը ստացավ 15 հազար դոլար մրցանակ, երկրորդը հորիզոնականն զբաղեցրած մասնակիցը 10 հազար դոլար, երրորդը՝ 5 հազար դոլարը կիսվեց երկու մրցանակակիրների միջեւ:

Այս տարի ժյուրիի կազմում էին՝ Արամ Թալալյանը (ժյուրիի նախագահ, Հայաստան), Անյա Լեխները (Գերմանիա), Օլե Ակահոշին (ԱՄՆ/Ճապոնիա), Թիմորա Ռոսլերը (Նիդերլանդներ/Իսրայել), Քրիստիան Ֆլորեան (Մոլդովա/Ռումինիա), Ալեքսեյ Սելեզնյովը (Ռուսաստան), Էրկի Լահեսմաան (Ֆինլանդիա):

Ի դեպ, Արամ Խաչատրյանի անվան միջազգային մրցույթը կյանքի է կոչվում ՀՀ մշակույթի նախարարության, «Արամ Խաչատրյան» մշակութային հիմնադրամի եւ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի համատեղ ջանքերի արդյունքում եւ անցկացվում է ՀՀ նախագահի տիկին Ռիտա Սարգսյանի հովանու ներքո: 2010 թվականից




մրցույթի գլխավոր գործընկերն է ԱՊՀ անդամ երկրների հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամը:

Ուրախալի է, որ դասական երաժշտության լավագույն կատարողներին ոգեւորում են ֆինանսական տեսանկյունից նաեւ:

Այս փառատոնը բացահայտում է տաղանդավոր մի շարք երաժիշտների եւ օգնում է, որ նրանք դառնան ճանաչված եւ սիրված հանրության շրջանում:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# «Ոսկե ծիրան»-ին հայտեր են ուղարկել աշխարհի 94 երկրից

Այս տարի «Ոսկե ծիրան» Երեւանի 10-րդ միջազգային կինոփառատոնի ֆիլմերի ծրագիրն ավանդաբար կպահպանի չորս մրցույթները՝ «Խաղարկային», «Վավերագրական», «Հայկական համայնապատկեր» եւ «Կորիզ» (կարճամետրաժ ֆիլմերի):

Երեկ լրագրողների հետ հանդիպմանը «Ոսկե ծիրան» ՄԿՓ ծրագրերի տնօրեն Միխայել Ստամբոլցյանը խոսելով փառատոնի հանդեպ տարեցտարի աճող հետաքրքրության եւ ներկայացված հայտերի մեծ թվի մասին (ավելի քան 1200 հայտ՝ շուրջ 96 երկրից)՝ ասաց, որ մրցութային ծրագրում ընդգրկվել է միայն 90 ֆիլմ:



Անդրադառնալով «Կորիզ» կարճամետրաժ ֆիլմերի մրցույթին, կինոռեժիսոր, «Կորիզ» կարճամետրաժ ֆիլմերի ծրագրի ղեկավար Արամ Շահբազյանը նշեց, որ այս ծրագիրը ներառում է հիմնականում երիտասարդ ռեժիսորների ֆիլմեր եւ հրաշալի հնարավորություն է հայ երիտասարդների համար ծանոթանալու աշխարհում իրենց հասակակիցների գործերին: Փառատոնի ՄԿՓ փոխտնօրեն Արա Խանջյանն էլ իր հերթին ավելացրեց, որ վավերագրական մրցույթի ֆիլմերի ընտրության գործում մեծ է եղել երիտասարդ կինոքննադատների մասնակցությունը:

«Հայկական համայնապատկեր» ծրագրում կներկայացվեն 23 խաղարկային, վավերագրական եւ կարճամետրաժ ֆիլմեր:

Խաղարկային մրցույթի ժյուրի կազմը հետեւյալն է՝ Իշտվան Սաբո, Անդրեյ Պլախով, Ջեյ Վայսբերգ, Սերժ Ավետիքյան եւ Թինա Լոք: Իսկ վավերագրական մրցույթի ժյուրիի անդամներ՝ Սերգեյ Լոզնիցա, Ռադա Սեսիչ, Գեորգ Էդուարդ Ռեսլ, Օսման Կավալա, Պիետրո Մարչելլո, իսկ հայկական համայնապատկեր մրցույթինը՝ Դեյվիդ դ՛Արսի, Ժան Ռադվանի, Նիք Ջեյմս, Մարինա Ալէս, Միխայել Պողոսյան: Եվ ահա «Կորիզինը»՝ Էդիտա Յանչակ-Հիրիարտ, Պավել Ֆինն եւ Ստեփան Հունդիչ:

Այս տարի «Հարգանքի տուրք» ծրագրերն անակնկալներ է պատրաստել: Փառատոնի շրջանակում հարգանքի տուրք կմատուցվի Արամ Խաչատրյանի 110, Արտավազդ Փելեշյանի եւ Ներսես Հովհաննիսյանի 75-ամյակների առթիվ:

«Ոսկե ծիրան» Երեւանի 10-րդ միջազգային կինոփառատոնի գլխավոր հովանավորն է ՎիվաՍել-ՄՏՍ-ը:

Ս. Հ.

# Եկեղեցականների նշանակումներ

Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնությամբ կատարվել են եկեղեցականների նոր նշանակումներ:

Արսեն քահանա Սարոյանը, ազատվելով բանակի առաջնորդությունում ստանձնած իր պարտականություններից, ծառայության է կոչվել Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանում, Երեւանի Սբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգեւոր սպասավոր Սեւակ քահանա Գաբրիելյանն իր ծառայությունը կշարունակի ԱՄՆ հայոց արեւելյան թեմում:

Հրաչ քահանա Մուրադյանն իր հոգեւոր սպասավորությունը կբերի Բուլղարիայի հայոց թեմում, Օշին քահանա Հայրապետյանը՝ Արթիկի թեմում, Հեթում քահանա Թարվերդյանը՝ Ռումինիայի հայոց թեմում եւ Հարություն քահանա Սեփանյանը՝ Արգենտինայի հայոց թեմում:

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԱՌԱՋ

# Ադրբեջան. Ռուստամ Իբրահիմբեկովը կձերբակալվի՞

*1-ին էջից*

Հետաքրքրական է, որ Ժողովրդավարական ուժերի ազգային խորհրդի հիմնադիր փաստաթղթում ընդգծված է «երկամյա անցումային շրջանի» գաղափարը:

Ըստ այդմ, ընտրություններում հաղթելու դեպքում ընդդիմադիր թեկնածուն պարտավորված կլինի երկու տարում անցկացնել նոր խորհրդարանական եւ նախագահական ընտրություններ, ապա հրաժեշտ կտա քաղաքականությանը: Ռուստամ Իբրահիմբեկովն այս իմաստով վկայակոչել է Ռոզա Օթունբաեւայի նախադեպը, երբ վերջինս գլխավորել է Ղրղզստանի անցումային կառավարությունը:

Երեկ ադրբեջանական լրատվամիջոցներում տեղեկություններ են շրջանառվել, որ Ռուստամ Իբրահիմբեկովն այս օրերին գտնվում է ԱՄՆ-ում եւ «հանդիպումներ է ունենում պետական դեպարտամենտում եւ Կոնգրեսում»: Վաշինգտոնում Իբրահիմբեկովը «փակ քննարկումներ է ունեցել» Ադրբեջանի Միլլի մեջլիսի նախկին խոսնակ Ռասուլ Գուլիեւի հետ: Ակնկալվում է, որ նախագահական ընտրություններում ընդդիմության հավանական թեկնածու համարվող Իբրահիմբեկովը Բաքու «կվերադառնա հունիսի 20-ից հետո»:

Ըստ երեւույթին, իշխող վարչախմբին հատկապես նյարդայնացրել է Վաշինգտոնում Իբրահիմբեկովի հանդիպումների մասին տեղեկատվությունը: Չէ՞ որ դրանով կոտրվում է պաշտոնական քարոզչությամբ հասարակությանը ներշնչված կարծրատիպը, որ «Իբրահիմբեկովն Ադրբեջանի հետ լարված հարաբերություններ ունեցող Կրեմլի քաղաքական նախագիծն է, մինչդեռ Իլհամ Ալիեւը վայելում է գերտերություն ԱՄՆ-ի կատարյալ աջակցությունը»:

Իշխող կուսակցության գործադիր քարտուղար Ալի Ահմեդովը երեկ սենսացիոն հայտարարություն է արել. «Ես դժվարանում եմ պատասխանել՝ Ադրբեջան վերադառնալու դեպքում կձերբակալվի՞ Ռուստամ Իբրահիմբեկովը: Իրավապահ մարմինների գործն է, թե ինչպես կվերաբերվեն այդ հարցին իրավական հարթությունում» (տես http://news.day.az/politics/408409.html/):

Ասվածի տպավորությունը «մեղմելու համար», իհարկե, Ահմեդովը վերստին շրջանառել է իշխանությունների ավանդական տեսակետը, թե «մի քանի ընդդիմադիր կուսակցություններից զատ Ադրբեջանում ոչ ոքի չի հետաքրքրում, թե ինչով կզբաղվի Ռուստամ Իբրահիմբեկովը», սակայն դա նման է «կռվից հետո բռունցքներ ճոճելուն»: Փաստն այն է, որ իլհամալիեւյան վարչախումբն արդեն իսկ «իրավական հարթությունում» հնարավոր է տեսնում Ռուստամ Իբրահիմբեկովի ձերբակալությունը, եթե վերջինս հայտնվի Բաքվում:

Կյանքի 8-րդ տասնամյակը թեւակոխած մարդու՝ Ռուստամ Իբրահիմբեկովի, համար, ըստ երեւույթին, Ալի Ահմեդովի ասածը նաեւ լուրջ սպառնալիք է: Չի բացառված, որ այդ կերպ վարչախումբը հայտնի կինոռեժիսորին «բարեկամաբար խորհուրդ է տալիս չենթարկվել փորձությունների»: Ժամանակին նման սպառնալիքի է ենթարկվել նաեւ Ռասուլ Գուլիեւը, երբ Բաքվի օդանավակայանում չարտերային ինքնաթիռով վայրէջք կատարելու փորձ էր արել 2008թ. նախագահական ընտրություններին թեկնածու առաջադրվելու հայտարարություն անելու մտադրությամբ:

«Ես կարծում եմ, որ Ազգային խորհրդին նրա նշանակությունից վեր ուշադրություն է դարձվում»,- ասել է իշխող կուսակցության գործադիր քարտուղար Ալի Ահմեդովը եւ ավելացրել, որ «Ադրբեջանի քաղաքացիների բացարձակ մեծամասնությունը պաշտպանում է Իլհամ Ալիեւի թեկնածությունը, այդպիսին է իրականությունը»:

Գուցե իրոք այդպես է, վիճել չարժե: Միայն թե էլ ինչո՞ւ է իշխող վարչախումբը ջղաձգվում Ռուստամ Իբրահիմբեկովի յուրաքանչյուր խոսքից: Ինչո՞ւ է Ալի Ահմեդովը հրապարակայնորեն ուղղորդում իրավապահ մարմիններին եւ միջնորդավորված սպառնում ընդդիմության կողմից նախագահի հավանական թեկնածու Ռուստամ Իբրահիմբեկովին: Չէ՞ որ «Ենի Ազարբայջան»-ի համագումարում Իլհամ Ալիեւը վստահաբար հայտարարել է. «Մենք մրցակիցներ չունենք»: Անմրցակից թեկնածուին ինչո՞ւ պիտի անհանգստացնի «մի ինչ-որ կինոռեժիսոր» Ռուստամ Իբրահիմբեկով...

INDEX
Ակումուլյատորների մասնագիտացված սրահ
VARTA



Tel: (+374 10) 572011
Fax: (+374 10) 552085
Web: www.varmex.am
Հասցե՝ Երեւան, Տիգրան Մեծի 46
E-mail:varmex@mail.ru
FILTRON

ՀՊՃՀ (ՊՈԼԻՏԵԽՆԻԿ)

մարմնակրթության եւ սպորտի կենտրոնը հրավիրում է բոլոր ցանկացողներին մարզվելու կենտրոնում գործող հետեւյալ խմբակներում՝ լող, բազկամարտ, սեղանի թենիս, բասկետբոլ, աթլետիզմ: Ձեզ հետ կաշխատեն բարձրակարգ մասնագետներ: Ցանկացողներին խնդրում ենք զանգահարել 010567784: Հասցե՝ Տերյան 105, ՀՊՃՀ, 21-րդ մասնաշենք:



Վաճառվում է

4 սեն. բնակարան Եր. Քոչարի փ. (եկեղեցու մոտ, 16/11 հ., 103 քմ), մշտ. ջուր, հին վերանորոգում, փոխված էլ. լարեր, 2 պատշգամբ, գեղեցիկ տեսարան, արեւկող, գինը՝ պայմանագրային: Հեռ.՝ 093-505-807, (010) 222-730

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 14.6.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: